

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ, ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

(լրամշակված տարբերակ 1)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
1. Միջազգային համատեքստ.....	3
2. Հայաստանյան մոտեցում	5
3. ՈԱԱԿ-ի առաքելությունը և ռազմավարական խնդիրները	6
4. Որակի ապահովման համատեքստը.....	7
ՀՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	9
1. ՄՈՒՀ-երի որակի արտաքին ապահովում	10
2. ՄՈՒՀ-երի որակի ներքին ապահովում	14
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԱԱԿ-Ի ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ	18
1. Ինստիտուցիոնալ փորձաքննություն.....	20
2. Ծրագրային հավատարմագրում	28
3. Ինստիտուցիոնալ փորձաքննության և մասնագիտության կրթական ծրագրերի հավատարմագրման ընթացակարգեր	31
4. ՈԱԱԿ-ի Գնահատման սկզբունքները.....	32
ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	36
2. Փորձագետների ընտրություն	42
3. Փորձագետների կատարած աշխատանքների գնահատում	45
4. Շահերի բախում, գաղտնիություն և ազնվություն	46
Հավելված 1: Տիպաբանություն. Ինստիտուցիոնալ փորձաքննություն/ծրագրային հավատարմագրում	48
Հավելված 2: Մասնագիտության ծրագրի կառուցվածք.....	50
Հավելված 3: Մասնագիտության կրթական ծրագրի պարբերաբար վերանայում.....	51
Հավելված 4: ՈԱԵԶՈՒ-ի ինտեգրում.....	53
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	56

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Միջազգային համատեքստ

Ամբողջ աշխարհում աճում է մասնագիտական կրթության որակի ապահովման ներքին և արտաքին համակարգեր ստեղծելու պահանջը: Դա բնական արձագանք է մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակի և դրանց հատկացվող հանրային ու մասնավոր ներդրումների արագ աճին: Բոլոնիայի հռչակագիրը ստորագրած երկրների բոլոր նախարարներն ընդգծել են Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում (EHEA) հավատարմագրման կամ որակի ապահովման այլ համակարգեր ներդնելու անհրաժեշտությունը (Բեռլինի կոմյունիկե, 2003): Բոլոնիայի հռչակագիրը ստորագրած բոլոր երկրներում որակի արտաքին ապահովումը պարտադիր գործընթաց է դարձել, և Եվրոպայի գրեթե բոլոր երկրները արձագանքել են այս պայմանին՝ հիմնելով և կիրառելով այդպիսի համակարգեր:

Բեռլինի կոմյունիկեն կոչ է արել Բարձրագույն կրթության (այսուհետ՝ ԲԿ) որակի ապահովման եվրոպական ասոցիացիային (ԲԿՈԱԵԱ) իր բոլոր գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ մշակել որակի ապահովման չափորոշիչների, ընթացակարգերի և ուղենիշների համաձայնեցված մի փաթեթ, որն ավելի տրամաբանական կդարձնի որակի ապահովման համակարգը Եվրոպայում և դրանով կնպաստի ակադեմիական և մասնագիտական շարժունությանը: Արդյունքում Բոլոնիայի հռչակագիրը ստորագրած երկրների կրթության նախարարները 2005թ. (Բերգենի կոմյունիկե) սահմանեցին և ընդունեցին *Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներն ու ուղենիշները* (այսուհետ՝ ՈԱԵՉՈՒ): ՈԱԵՉՈՒ-ը կառավարությունների, որակի ապահովման գործակալությունների և ԲԿ հաստատությունների համար Որակի Ապահովման ազգային համակարգեր մշակելու խորհրդատվություն և օժանդակություն ստանալու աղբյուր է հանդիսանում: ՈԱԵՉՈՒ-ը զգալի չափով համադրելի է Որակի ապահովման գործակալությունների միջազգային ուղենիշների հետ, ուստի դրանք կիրառելի է դարձնում ազգային, ինչպես նաև միջազգային մակարդակներում: Չնայած ՈԱԵՉՈՒ-ը պարտադիր բնույթ չի կրում, սակայն տրամադրում է միասնական կողմնորոշիչ շրջանակ, որն ուղղված է որակավորումների միջազգային ճանաչմանը: Այսօր *ՈԱԵՉՈՒ-ի* կատարումն անհրաժեշտ պայման է դարձել նաև

ՈԱԳՑ-ին (ENQA) անդամակցելու և Որակի ապահովման գործակալությունների եվրոպական գրանցամատյանում (ՈԱԳԵԳ) գրանցվելու համար:

Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ

ՈԱԵՉՈՒ-ը բաղկացած է երեք մասից.

Մաս 1: *Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ* բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման համար

Մաս 2: *Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ* բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման համար

Մաս 3: Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ որակի արտաքին ապահովման գործակալությունների համար

Որակի արտաքին ապահովման ընթացակարգերը պետք է հաշվի առնեն որակի ներքին ապահովման գործընթացների արդյունավետությունը: Բերգենի կոմյունիկեում Բոլոնիայի հոչակագիրը ստորագրած երկրների կրթության նախարարները կոչ արեցին բոլոր բուհերին հիմնել այդպիսի համակարգ և համաձայնեցնել այն որակի արտաքին ապահովման ազգային համակարգի հետ: ՈԱԵՉՈԻ-ի առաջին մասում սահմանված սկզբունքները որակի ներքին ապահովման համակարգեր կառուցելու կարևոր հիմք են ձևավորում թե՛ բարձրագույն ուսումնական հաստատությունների և թե՛ որակի ապահովման գործակալությունների համար: ՈԱԵՉՈԻ-ի առաջին և երրորդ մասերը կարևոր նշանակություն ունեն որակի ապահովման գործակալություններին ուղղորդելու համար (տես՝ որակի ներքին ապահովում, էջ 33)

Ըստ ՈԱԵՉՈԻ-ի երկրորդ մասի՝ որակի արտաքին ապահովման գլխավոր բնութագրերն են.

- Որակի ապահովման գործընթացների նպատակներն ու խնդիրները պետք է սահմանվեն բոլոր պատասխանատուների կողմից (ներառյալ ՄՈԻՀ-երը) մինչև բուն գործընթացների և կիրառվելիք ընթացակարգերի մշակումը և պետք է հրապարակվեն:
- Որակի արտաքին ապահովման գործընթացի արդյունքում կայացրած յուրաքանչյուր պաշտոնական որոշում պետք է հիմքում ունենա նախօրոք հրապարակված չափանիշներ, որոնք պետք է կիրառվեն համահավասար:
- Որակի արտաքին ապահովման գործընթացները պետք է պլանավորվեն՝ նպատակի իրականացումը երաշխավորելու համար:
- Ձեկույցները պետք է հրապարակված և շարադրված լինեն հասցեատիրոջ համար պարզ և հասկանալի ոճով: Ձեկույցում գետեղված ցանկացած որոշում՝ երաշխավորական կամ խորհրդատվական, պետք է ընկալելի լինի ընթերցողին:
- Որակի ապահովման այն գործընթացները, որոնք պարունակում են որևէ միջոցառում իրականացնելու խորհրդատվություն կամ պահանջում են հաջորդող գործողությունների պլան, պետք է ունենան գործողությունների նախանշված ընթացակարգ, որը պետք է իրականացվի համապատասխան կերպով:
- ՄՈԻՀ-երի և/կամ կրթական ծրագրերի որակի արտաքին ապահովման գործընթացները պետք է կատարվեն շրջափուլային (ցիկլիկ) եղանակով: Շրջափուլի տևողությունը և վերանայման ընթացակարգերը պետք է հստակ սահմանվեն և նախապես հրապարակվեն:
- Որակի ապահովման գործակալությունները պետք է ժամանակ առ ժամանակ հրատարակեն ամփոփ զեկույցներ, որոնք պարունակում են նրանց կողմից իրականացված դիտարկումների և գնահատումների ընդհանուր տվյալների նկարագրությունն ու վերլուծությունը:

2. Հայաստանյան մոտեցում

Ա. Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ) հիմնադրվել է կառավարության 2008թ. նոյեմբերի 7-ի թիվ 1486-Ն որոշմամբ : ՈԱԱԿ-ը Հայաստանի մասնագիտական կրթության որակի ապահովման ծառայությունների մատուցողն է: Սույն ուղենիշների և չափանիշների նպատակն է աջակցել մասնագիտական ուսումնական հաստատություններին (այսուհետ ՄՈՒՀ)՝ ստեղծելու որակի ապահովման համակարգը՝ Հայաստանի օրենսդրությանը և ՈԱԵԶՈՒ-ին համապատասխան:

Բ. ՄՈՒՀ-երի խնդիրն է ստեղծել որակի ներքին ապահովման այնպիսի մեխանիզմներ, որոնք համահունչ կլինեն ՈԱԱԿ-ի՝ որակի արտաքին ապահովման ձեռնարկած միջոցառումներին: Դրանք ընդգրկում են, , երաշխավորություններ և պահանջներ, որոնք սահմանված են մի շարք միջազգային հրապարակումներում և հաշվի են առնում ազգային պահանջումները, սակայն միջոցառումները դրանցով չեն սահմանափակվում

1. ԵՄ խորհրդի 1998 թ. սեպտեմբերի 24-ի՝ բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտում եվրոպական համագործակցության վերաբերյալ հանձնարարական (98/561/EC),
2. Եվրոպական բարձրագույն կրթության տարածք, Եվրոպայի կրթության նախարարների՝ Բոլոնիայում 1999թ. հունիսի 19-ին գումարված համաժողովի համատեղ հռչակագիր (Բոլոնիայի հռչակագիր),
3. Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում Որակի ապահովման չափորոշիչներ և ուղենիշներ (2005),
4. Որակի ապահովման գործընթացը կարգավորող փաստաթղթեր, որոնք տրամադրվել են ՈԱԱԿ-ին ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից՝ ի պատասխան ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարի և 2009թ. օգոստոսից 2010թ. հուլիսն ընկած ժամանակահատվածում իրականացված փորձնական միջոցառումների ընթացքում:
5. Հաշվի առնելով ՄՈՒՀ-երի գործունեության շրջանակներում իրավակազմակերպական ձևերի առկա տարբերությունները՝ ՈԱԱԿ-ը ճկուն մոտեցում է ցուցաբերելու չափորոշիչները և ուղենիշները մեկնաբանելու և վերլուծելու գործընթացում: Բոլոր ՄՈՒՀ-երը պետք է առաջնորդվեն պետության կողմից սահմանված չափորոշիչներով, ինչպես նաև ՈԱԱԿ-ի կողմից պահանջվող չափանիշներով ու չափորոշիչներով:

Գ. Սույն ուղենիշների, չափանիշների և չափորոշիչների նպատակն է հավաստել, որ ՄՈՒՀ-երը հետամուտ են հետևյալ հարցերին.

- Արդյո՞ք ՄՈՒՀ-ն ունի որակի մշակույթ ձևավորող ընթացակարգեր, որոնք գործում են հաստատության բոլոր օղակներում և կրթական բոլոր ծրագրերի իրականացման ընթացքում,
- Արդյո՞ք ՄՈՒՀ-ը պարբերաբար մշտադիտարկում է որակական

նպատակներին հասնելու իր առաջընթացը, մասնավորապես կրթական ծառայությունների որակի պահպանումն ու հետագա բարելավումը,

- Արդյո՞ք որակի ապահովման ընթացակարգերի տվյալներն օգտագործվում են կրթական և վերապատրաստման ծառայությունների որակը բարձրացնելու և սովորողների կարիքներին համապատասխանելու նպատակով,
- Արդյո՞ք ՄՈՒՀ-երը մշտադիտարկում են սովորողներին տրամադրվող ծառայությունների արդյունավետությունը,
- Արդյո՞ք ձեռնարկվում են համապատասխան գործողություններ, որոնք կվերացնեն որակի ապահովման գործընթացում հայտնաբերված բացթողումները,
- Արդյո՞ք շահակիցներին տրամադրվում է հաստատության և մասնագիտությունների կրթական ծրագրերի որակի վերաբերյալ համարժեք տեղեկատվություն:

Դ. Մասնագիտական կրթության որակի ապահովումը զարգացող նոր մոտեցում է ՀՀ կրթության համակարգում: Հետևաբար, ՈԱԱԿ-ը պարբերաբար վերամշակելու է սույն ուղենիշները, չափանիշները և չափորոշիչներն՝ ազգային և միջազգային լավագույն փորձին համապատասխան:

Ե. Ըստ ՈԱԱԿ-ի՝ որակի ապահովման ընթացակարգերի մշակման, պահպանման և իրագործման ընթացքում կարևոր է հասկանալ, որ այն չի կարող սահմանափակվել միայն հեշտ չափելի քանակական տվյալներով, քանի որ դա կարող է ուշադրությունը շեղել որակի ապահովման գործընթացի այլ կարևոր ասպեկտներից, որոնք չափվում են որակական մոտեցումների միջոցով:

Զ. Որակի ապահովման համակարգերը պետք է ինտեգրված լինեն ՄՈՒՀ-երի բնականոն ուսումնական գործունեության մեջ:

Է. ՈԱԱԿ-ը դիտարկելու է ՄՈՒՀ-երի որակի ապահովման արդյունավետությունը շրջափուլային եղանակով: Նման դիտարկումների արդյունքները հանրությանը հասանելի կլինեն: Զեկույցների հրապարակումը կարևոր է հանրության վստահությունը ձեռք բերելու համար առ այն, որ որակը վերահսկվում և կառավարվում է:

Ը. ՈԱԱԿ-ը ձգտում է ձևավորել և իրականացնել որակի ապահովման գործընթացները բոլոր շահակիցների մասնակցությամբ:

3. ՈԱԱԿ-ի առաքելությունը և ռազմավարական խնդիրները

ՈԱԱԿ-ը որակի ապահովման գործակալություն է, որն անկախ է ՀՀ կառավարությունից և մասնագիտական ուսումնական հաստատություններից: ՈԱԱԿ-ը նպաստում է հանրության վստահության ձևավորմանը, սոցիալական համախմբվածությանը, հավասարությանը, պատասխանատվության և մրցունակությանը մասնագիտական կրթական ծառայությունների որակի պարբերաբար բարելավման միջոցով :

ՈԱԱԿ-ն իրականացնում է իր առաքելությունը՝

- բավարարելով շահակիցների պահանջները ինստիտուցիոնալ փորձաքննության և ծրագրային հավատարմագրման միջոցով,
- համաձայնեցնելով որակի ապահովման իր չափանիշները և չափորոշիչները ընդունված միջազգային չափանիշների և չափորոշիչների հետ,
- երաշխավորելով միջազգային ճանաչելիությունը, ինչը կնպաստի Եվրոպայում ՀՀ մասնագիտական կրթության ամուր դիրքեր հաստատելուն,
- արժեվորելով շահակիցների հետ սերտ համագործակցությունը որակի ապահովման համակարգի զարգացման գործում:

ՈԱԱԿ-ի ռազմավարական խնդիրները հետևյալն են.

- հավաստել ՄՈՒՀ-երի գործունեության և նրանց կողմից շնորհվող որակավորումների համապատասխանությունը մասնագիտական կրթության կրթական չափորոշիչներին, աջակցել մասնագիտական կրթության ծառայությունների որակի շարունակական բարելավմանը՝ համագործակցելով մասնագիտական կրթության շահակիցների հետ,
- խթանել ՄՈՒՀ-երի նվիրվածությունը որակի ապահովման գործընթացին,
- երաշխավորել ՄՈՒՀ-երի որակի վերաբերյալ թափանցիկ և ճշգրիտ տեղեկատվության հասանելիությունը հանրությանը,
- կիրառել ազգային և միջազգային լավագույն փորձը ՄՈՒՀ-երի կրթական ծառայությունների գնահատման ընթացքում:

ՈԱԱԿ-ը գիտակցում է, որ որակի ապահովման համակարգի ներդրումն ու պահպանումը ՄՈՒՀ-երի առաջնահերթ պարտավորությունն ու պատասխանատվությունն է: Քանի որ որակի ապահովման որևէ «ճշգրիտ մոդել» գոյություն չունի, ուստի յուրաքանչյուր ՄՈՒՀ, հիմք ընդունելով սույն փաստաթղթում ներկայացված ուղենիշները, չափանիշները և չափորոշիչները, ինքն է մշակելու իր համակարգը:

4. Որակի ապահովման համատեքստը

4.1 ՈԱԱԿ-ը որդեգրել է որակի մի սահմանում, որը բնութագրում է որակը որպես համապատասխանություն հայտարարված նպատակներին: Համաձայն այս ըմբռնման՝ ՈԱԱԿ-ը պետք է որոշի, թե որքանով է կրթական ծառայությունը կամ արդյունքը համապատասխանում սահմանված նպատակներին: Նման սահմանումը թույլ է տալիս հաստատություններին իրենց որդեգրած առաքելության մեջ դնել նպատակներ, որոնց հասնելու աստիճանով է գնահատվելու և ներկայացվելու որակը: ՈԱԱԿ-ը առաջին հերթին հատուկ ուշադրություն է դարձնելու նպատակների համարժեքությանը հասարակության պահանջներին և ՀՀ կառավարության կողմից հաստատված չափորոշիչներին ու առաջնահերթություններին: Այս մոտեցումը ենթադրում է, որ

առաջին հերթին պետք է սահմանվեն բարձրագույն կրթության գաղափարները և նպատակները. կրթության արդյունքները և ծառայությունները պետք է բավարարեն սպառողների կարիքները և ցանկությունները: Դա նաև ենթադրում է, որ սպառողը պետք է հստակ արտահայտի իր կարիքներն ու ցանկությունները: Բարձրագույն կրթության նպատակները առաքելության մեջ ընդհանրացված են, իսկ ավելի կոնկրետ են ակադեմիական/ կրթական մակարդակում՝ մասնագիտության կրթական ծրագրի նպատակների և ակնկալվող ուսումնառության արդյունքների մեջ: Այլ կերպ ասած, ուսումնական հաստատությունը ասում է, թե ինչ է անում, իրականացնում է խոստացվածը և ապացուցում է դա երրորդ մարմնին:

4.2. Մասնագիտական կրթության որակը սերտորեն կապված է դասավանդման արդյունավետության և գործունակության հետ: Արդյունավետությունը կապված է դասընթացի խնդիրների իրականացման, իսկ գործունակությունը՝ խնդիրների իրականացման համար կիրառվող ռեսուրսների հետ: Նպատակների համապատասխանությունը չափելիս ՈԱԱԿ-ը հատուկ ուշադրություն է դարձնելու տվյալ նպատակի համապատասխանությանը պետական կրթական չափորոշիչներին, հասարակության պահանջներին ու առաջնահերթություններին, և միայն այդ ժամանակ է սկսելու վերլուծել, թե որքանով են դրանք իրականացվել:

4.3. Մասնագիտական կրթության որակի ապահովումը մի գործընթաց է, որը նպատակաուղղված է որակի պահպանմանն ու բարձրացմանը. այն է՝ դասավանդում և ուսումնառություն, հետազոտություններ, ծառայությունների մատուցում հասարակությանը, վերլուծություն, պատշաճության մակարդակի ապահովում, կադրերի հավաքագրման, նշանակման ընթացակարգեր և տարբեր մեխանիզմներ ու համակարգեր:

4.4. Մասնագիտական կրթության որակի ապահովման նպատակն է երաշխավորել մասնագիտական կրթության չափորոշիչների և որակի բարելավումը՝ մասնագիտական կրթությունը ուսանողների, գործատուների և ամբողջ հասարակության կարիքներին համապատասխանեցնելու համար:

4.5. ՄՈՒՀ-երի որակի ներքին ապահովումը Հայաստանի մասնագիտական կրթության որակի արտաքին ապահովման համակարգի հիմնական տարրերից է: ՈԱԱԿ-ի որակի ապահովման գործընթացները թույլ են տալիս պարբերաբար գնահատել հաստատությունների գործունեությունը և մասնագիտության կրթական ծրագրերի իրականացման ընթացքը:

4.6. Որակի ապահովման գործընթացները ունեն երեք հիմնական նպատակ.

- **Հաշվետվողականություն և թափանցիկություն.** որակի ապահովման գործընթացները երաշխավորում են, որ հասարակության շահերը պաշտպանված են բարձրագույն կրթության որակի և չափորոշիչների պահպանման դեպքում, նաև հրապարակային են դարձնում առանձին ՄՈՒՀ-երի կրթական ծառայությունների որակը ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային համատեքստում:

- **Վերահսկում.** հաստատությունը ոչ միայն վերահսկում է ռեսուրսների ծախսը, այլ նաև ցույց է տալիս, որ առկա ռեսուրսներով հասնում է հնարավորինս բարձր որակի:
- **Որակի բարելավում.** հաստատությունը քննարկումներ և վերլուծություններ է ձեռնարկում որակի ապահովման գործընթացի արդյունավետության, որակի մշակույթի սերմանման և շարունակական զարգացման նպատակով:

4.7. Որակի շարունակական բարելավումն ընդգրկում է երեք հիմնական գործողություն՝ նպատակների և չափորոշիչների սահմանում, գործունեության արժևորում ըստ այդ չափորոշիչների և հետագա գործունեության բարելավում: Դա ձևավորում է որակի համապարփակ կառավարման շարժիչ սկզբունքը՝ պլանավորում, իրականացում, ստուգում, և բարելավում՝ գործընթաց, որի միջոցով ՄՈՒՀ-ը իր և իր շահակիցների համար հաստատում է, որ հնարավորինս բարձր չափորոշիչների է հասել իր գործունեության բոլոր ոլորտներում:

4.8. Հաշվետվողականության համատեքստում որակի ապահովումը գործածվում է որպես մշտադիտարկումներ կատարելու մեխանիզմ: Սովորողները, շրջանավարտները, գործատուները և հասարակությունը բարձր որակ են ակնկալում հաստատություններից: Որակի ապահովումը կարևորագույն գործիք է ՄՈՒՀ-երի կրթական գործունեության համար, որը երաշխավորում է, որ դրանք բավարարում են հասարակության պահանջներն ու կարիքները: Այն միաժամանակ ապահովում է ՄՈՒՀ-ի անկախությունը և ինքնավարությունը:

4.9. ՄՈՒՀ-երի հաշվետվողականությունը և թափանցիկությունը երաշխավորելու համար անհրաժեշտ է որակի ներքին ապահովման ռազմավարության և ընթացակարգերի արտաքին գնահատում:

4.10. Որակի չափորոշչային մակարդակին հասնելու համար ՄՈՒՀ-ի գործունեության բոլոր ոլորտներում և գործառույթներում պահանջվում է տեղեկատվական հոսքերի պարզեցում և ընթացակարգերի թափանցիկություն:

4.11. Տեղեկատվության միջոցները կամ տեղեկատվության տրամադրման եղանակը մեծ նշանակություն ունեն ՄՈՒՀ-երի համար: ՄՈՒՀ-ի առաքելությունը և կանոնակարգող համապատասխան բոլոր փաստաթղթերը պետք է հրապարակված լինեն և հասանելի դառնան դասախոսներին, ուսանողներին ու բոլոր շահակիցներին: Տարբեր նպատակներով պատրաստված ուղեցույցները, տեղեկատվական փաթեթները և այլ հրապարակումները պետք է հրատարակվեն ու տարածվեն: Համարժեք ողջ տեղեկատվությունը պետք է տեղադրված լինի նաև ՄՈՒՀ-ի կայքէջում:

ՀՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՀ-ում որակի ապահովումը պարտադիր գործընթաց է բոլոր ՄՈՒՀ-երի համար՝ անկախ իրավակազմակերպական ձևից: Այն բաղկացած է երկու հիմնական բաղադրիչներից՝

- ՄՈՒՀ-երի որակի ներքին ապահովում, որը ՄՈՒՀ-ի պատասխանատվությունն է,

- ՄՈՒՀ-երի որակի արտաքին ապահովում, որն իրականացվում է որակի ապահովման անկախ գործակալության կողմից:

1. ՄՈՒՀ-երի որակի արտաքին ապահովում

1.1. ՈԱԱԿ-ի որակի ապահովման սկզբունքները

ՈԱԱԿ-ը երաշխավորում է ուսումնական հաստատություններին մատուցվող ծառայությունների որակը և հուսալիությունը՝ ղեկավարվելով հետևյալ սկզբունքներով.

- ՈԱԱԿ-ի մատուցած ծառայությունները պետք է լինեն հասկանալի, թափանցիկ և պատշաճ կազմակերպված, ֆինանսապես արդյունավետ: ՈԱԱԿ-ն իր գործունեության համար հաշվետու է հանրությանը:
- ՈԱԱԿ-ի չափանիշները պետք է հստակ համապատասխանեն որակի ապահովման նպատակին և պարզ ու հասանելի լինեն հանրությանը:
- ՈԱԱԿ-ի մատուցած ծառայությունները պետք է լինեն վավեր, հուսալի և գործնական, իսկ որոշումների կայացումը պետք է կատարվի ըստ սահմանված չափանիշների:
- ՈԱԱԿ-ը պատասխանատվություն է կրում կրթության որակի հավաստիության համար, իսկ ՄՈՒՀ-ը՝ կրթության որակի համար:
- ՈԱԱԿ-ի ծառայությունները պետք է հասանելի լինեն բոլոր մասնագիտական ուսումնական հաստատություններին:
- ՈԱԱԿ-ի ծառայությունները միտված են պաշտպանելու ուսումնառողներին ցածրորակ կրթական ծառայություններից ու արդյունքներից և չպետք է բացասաբար անդրադառնան նրանց վրա:

1.2. Որակի արտաքին ապահովման շրջանակը

Հայաստանի մասնագիտական կրթության որակի ապահովման համար ՈԱԱԿ-ը մշակել է Որակի ապահովման ամբողջական շրջանակ, որը կառուցված է չորս գործընթացների¹ շուրջը, որոնք գնահատվում են ըստ սահմանված չափանիշների և չափորոշիչների: Այս շրջանակի կիրառման նպատակն է օժանդակել ՄՈՒՀ-երին հաստատության և իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի մակարդակում ինքնագնահատում կատարելու և բարելավման կարիք ունեցող ոլորտները բացահայտելու գործում:

1.2.1. Ինստիտուցիոնալ փորձաքննությունը պարտադիր գործընթաց է բոլոր ՄՈՒՀ-երի համար՝ անկախ դրանց իրավակազմակերպական ձևից:

- Ինստիտուցիոնալ փորձաքննության նպատակն է.
 - Որակի ապահովման գործընթացին ՄՈՒՀ-երի ներգրավումը հաստատության ռազմավարության իրականացման ընթացքի և արդյունքների գնահատումը

¹ Պլանավորում, իրականացում, գնահատում, վերանայում՝ տես էջ 33

- Մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումների խթանումը,
- Որակի բարելավումը և հաշվետվողականության ապահովումը,
- Ինստիտուցիոնալ փորձաքննության անցկացման արդյունքներն են.
 - Դրական արդյունքի դեպքում՝
 - կրթական գործընթացների որակի երաշխավորում
 - մասնագիտական ուսումնական հաստատություններում որակի ապահովման գործընթացների իրակացման որակի երաշխավորում
 - Բացասական արդյունքի դեպքում՝
 - արդյունքները ներկայացվում են լիազոր մարմնին (ԿԳՆ) համապատասխան որոշում կայացնելու համար

1.2.2. Հավատարմագրումը ճանաչման գործընթաց է, որը հավաստում է մասնագիտության կրթական ծրագրի կամ ՄՈՒՀ-ի համապատասխանությունը նախանշված չափորոշիչներին: Այն հավաստում է նաև, որ շրջանավարտները կարող են կրթությունը շարունակել կամ ծավալել համապատասխան մասնագիտական գործունեություն:

Մասնագիտության կրթական ծրագրի հավատարմագրումը կամավոր գործընթաց է:

ա. Կրթական ծրագրերի հավատարմագրման գործընթացի նպատակն է հավաստել հասարակությանը մատուցվող կրթության որակը, ապահովել պետական ներդրումների նկատմամբ հաշվետվողականությունը, որակավորումների ճանաչումը և որակի բարելավումը:

- բ.** Հավատարմագրման թիրախն առանձին մասնագիտության կրթական ծրագրին է,
- գ.** Ծրագրային հավատարմագրման արդյունքներն ու հետևանքներն են՝
 - **Հավատարմագրվածի կարգավիճակ և գրանցում Հավատարմագրման պետական գրանցամատյանում**
 - **Պետական ֆինանսական միջոցների տրամադրում.** կառավարությունը ֆինանսական միջոցներ կհատկացնի միայն հավատարմագրված և ՈԱԱԿ-ի կողմից պետական գրանցամատյանում գրանցված մասնագիտության կրթական ծրագրերին:
 - **Որակավորումների և կրեդիտների ճանաչում ազգային և միջազգային մակարդակներում.** միայն հավատարմագրված ծրագրի սահմաններում ձեռք բերված կրեդիտներն են ճանաչվելու և նպաստելու շարժունությանը:
 - **Աշխատաշուկայի կարգավորում.** հավատարմագրված որակավորումներն առավելություն են ունենալու աշխատաշուկայում, ինչպես նաև ապահովելու են ոչ պետական ՄՈՒՀ-երի շրջանավարտների մուտքը աշխատաշուկա:

դ. Հավատարմագրման պետական գրանցամատյանում գրանցումներ և փոփոխություններ կատարելու իրավասությունը տրված է ՈԱԱԿ-ին:


Մասնագիտական ուսումնական հաստատությանը իրավունք է վերապահվում հավատարմագրվել միջազգային որակի ապահովման մեկ այլ կենտրոնի կողմից: Այդ գործընթացի արդյունքները ճանաչելի են դառնում ՀՀ-ում միայն ՈԱԱԿ-ի համաձայնության դեպքում (ՈԱԱԿ-ը նախօրոք հրապարակում է գնահատող կառույցի չափանիշները): Գործընթացի նախաձեռնման մասին ՈԱԱԿ-ը նախօրոք տեղեկացվում է, և գործընթացի թե՛ դրական, թե՛ բացասական արդյունքը գրանցվում է գրանցամատյանում:

ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում կիրառվող **ծրագրային հավատարմագրումն** ուսումնասիրում է առանձին մասնագիտության կրթական ծրագիրը, այլ ոչ թե հաստատությունն ամբողջությամբ: Հավատարմագիրը շնորհվում է առանձին մասնագիտության կրթական ծրագրին: Հավատարմագրումն իրականացվում է շրջափուլային եղանակով:

1.2.3. ՈԱԱԿ-ի ճանաչումը. ՈԱԱԿ-ի կողմից մատուցվող որակի ապահովման ծառայությունների՝ միջազգային մակարդակում պատշաճությունն ու ճանաչումը երաշխավորելու համար ՈԱԱԿ-ը միջազգային գործակալությունների կողմից պարբերաբար ենթարկվելու է Եվրոպական չափանիշներին և չափորոշիչներին համապատասխանող արտաքին փորձաքննության: ՈԱԱԿ-ի ակտիվ գործունեության առաջին երկու տարուց հետո՝ 2014թ. ՀՀ կրթության և գիտության նախարարությունը պետք է նախաձեռնի ՈԱԱԿ-ի ճանաչման գործընթաց՝ միջազգային կազմակերպությունների ներգրավմամբ:

1.2.4. Տեղեկատվության ապահովումը. Հայաստանի մասնագիտական կրթության վերաբերյալ տեղեկատվությունը պետք է դառնա հանրությանը հասանելի: Դա կապահովի կրթական ծառայությունների թափանցիկությունը:

Որակի արտաքին ապահովման շրջանակը



1.3 Որակի արտաքին ապահովման ընթացակարգերը, փորձագետների ընտրությունը և արդյունքների հրապարակումը

1.3.1 Միջազգային լավագույն փորձին համապատասխան՝ որակի արտաքին ապահովման գործընթացը ընթանում է երեք հիմնական փուլերով.

- որակի արտաքին ապահովման գործընթացի ենթակա կառույցի ինքնագնահատում,
- արտաքին փորձագետների այցելություն,
- երկու փուլերի արդյունքների հիման վրա որոշման ընդունում և հրապարակում:

1.3.2 Փորձագիտական խմբում համապատասխան փորձագետների ընտրությունը որակի ապահովման գործընթացի հաջողության գրավականն է: ՈԱԱԿ-ը սահմանել է ընտրության չափանիշներ (տե՛ս էջ 91) և սկսել է ձևավորել ազգային և միջազգային որակյալ փորձագետների խումբ: Փորձագետների խմբի անդամներին ներկայացվող հիմնական պահանջներից են.

- փորձաքննության ենթակա ոլորտում հեղինակավոր մասնագետ լինելը,
- ինքնուրույն և անկախ գործելու ու որոշում կայացնելու կարողությունը,
- «Շահերի բախման» բացակայությունը (մանրամասն տես էջ 45):

1.3.3 Միջազգային փորձագետներ ներգրավելու նպատակով ՈԱԱԿ-ը հիմնվելու է որակի ապահովման ճանաչված միջազգային գործակալությունների հետ համագործակցության վրա:

1.3.4 Որակի ապահովման համահավասար գործընթացներ իրականացնելու նպատակով ՈԱԱԿ-ը վերապատրաստելու է փորձագետներին: ՄՈՒՀ-երին և փորձագետներին կտրամադրվեն համապատասխան ուղեցույցեր և ձևաչափեր:

1.3.5 ՈԱԱԿ-ը այս ուղենիշները, չափանիշները և չափորոշիչները մշակել է համաձայն միջազգային մոտեցումների՝ հաշվի առնելով ազգային կրթական համակարգի առանձնահատկությունները:

1.3.6 ՈԱԵԶՈՒ-ի պահանջների համաձայն՝ ՈԱԱԿ-ը պետք է հրապարակի որակի արտաքին ապահովման գործընթացների արդյունքները: Հրապարակման ենթակա են թե՛ դրական և թե՛ բացասական արդյունքները, ինչպես նաև փորձագետների զեկույցները:

1.3.7 Փորձագետների զեկույցից գատ՝ ՈԱԱԿ-ը գործընթացի ավարտից հետո թողարկելու է ստացված տվյալների վերաբերյալ 2-3 էջից բաղկացած ամփոփագիր/եզրակացություն:

2.ՄՈՒՀ-երի որակի ներքին ապահովում

2.1. ՄՈՒՀ-երի որակի ներքին ապահովման համակարգերի ձևավորմանը և կառավարմանը ներկայացվող պահանջները

- 2.1.1 ՄՈՒՀ-ի որակի ներքին ապահովման ընթացակարգերը պետք է համահունչ լինեն ՈԱԱԿ-ի ռազմավարությանը, չափանիշներին և միտված լինեն մասնագիտական կրթության որակի կայունությանն ու բարելավմանը : ՈԱԱԿ-ը, ելնելով իր որակի ապահովման քաղաքականությունից, կտրամադրի շրջանակ, որը կուղղորդի ՄՈՒՀ-երի որակի ներքին ապահովման գործընթացները:
- 2.1.2 Որակի ներքին ապահովման քաղաքականությունը պետք է արտացոլի ՄՈՒՀ-ի առաքելությունն ու որդեգրած արժեքները և սերտորեն կապված լինի թե՛ կառավարման ռազմավարական պլանի և թե՛ իրականացվող գործունեության հետ: Որակի ներքին ապահովման քաղաքականությունը պետք է սահմանի որակի պարզ և չափելի խնդիրներ կազմակերպության տարբեր գործառույթների և մակարդակների համար: Որակի ներքին ապահովման գործընթացները պետք է առաքելության, արժեքների և գործողությունների ծրագրերի, ձեռքբերումների վերլուծության, վերանայման, և զարգացման հնարավորություն տան:
- 2.1.3 Որակի ներքին ապահովման քաղաքականությունը պետք է ներառի ՄՈՒՀ-ի բոլոր այն գործառույթները և գործողությունները , որոնք ազդում են մասնագիտությունների կրթական ծրագրերի չափորոշիչների պահանջների պահպանման և որակի ապահովման վրա, օրինակ. դասավանդումը, հետազոտական աշխատանքները, ուսումնառությանն աջակցող ծառայությունները, տարածքային ռեսուրսները, հազեցվածությունը, կառավարումը, համայնքային ծառայությունները, համագործակցությունը աշխատաշուկայի հետ և այլն:
- 2.1.4 Որակի ներքին ապահովման քաղաքականությունը պետք է միտված լինի հայտարարված առաքելությունից բխող նպատակների արդյունավետ իրականացմանը: Ըստ թիրախների կատարողականի ցուցիչների վերանայումն այսպիսի քաղաքականության բաղկացուցիչ մասն է: Ակնկալվող ուսումնառության արդյունքներին ուսանողների կողմից հասնելու աստիճանը պետք է լինի քննարկման հիմնական առարկան: Մասնագիտության կրթական ծրագրի հետագա բարելավումը նույնպես պետք է լինի քաղաքականության հիմնական խնդիրը:
- 2.1.5 Որակի ներքին ապահովման քաղաքականություն մշակելու և հաստատության գործունեության որակը պահպանելու ու բարելավելու պատասխանատվությունը, որպես կանոն, վերապահվում է ՄՈՒՀ-ի կառավարման մարմնին: Եթե կառավարման մարմինը որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի մշակման ու իրականացման պատասխանատվությունը վերահասցեագրում է որևէ այլ մարմնի կամ պաշտոնատար անձի, ապա դա անհրաժեշտ է հստակ սահմանել: Պատասխանատու մարմինը կամ անձը որակին առնչվող խնդիրները պետք է անմիջականորեն զեկուցի կառավարման մարմնին, ուստի պետք է պատշաճ տեղ զբաղեցնի հաստատության կազմակերպական կառուցվածքում, որպեսզի իրեն վերապահված գործառույթները կատարելու անհրաժեշտ լիազորություններ ունենա:
- 2.1.6 Որակի ներքին ապահովման քաղաքականությունը պետք է ապահովի արտաքին փորձագետների ներգրավումը որակի ապահովման քաղաքականության և

գործընթացների վերանայման գործում: Արտաքին փորձագետների ընտրության և մասնակցության հարցում պետք է ապահովվի նաև էթիկայի նորմերի պահպանումը: Փորձագետները պետք է նախապես հայտնեն անձնական, մասնագիտական, ակադեմիական կամ գործնական շահերի առկայության մասին, որոնք կարող են հակասել իրենց փորձագիտական պարտավորություններին: Փորձագետների անկախությունն ու գործընթացի թափանցիկությունը որոշիչ գործոններ են հաջողության հասնելու համար:

- 2.1.7 Որակի ներքին ապահովման քաղաքականության հաջող իրականացման համար ՄՈՒՀ-ը պետք է հատկացնի անհրաժեշտ ռեսուրսներ:
- 2.1.8 ՄՈՒՀ-ը պետք է ունենա որակի ապահովման գործընթացների ամբողջական նկարագրություն պարունակող Որակի ապահովման ձեռնարկը: Ձեռնարկը պետք է ներառի կազմակերպական կառուցվածքի գծապատկերը, որը ցուցադրում է որակի ապահովման պատասխանատվությունների բաշխումը և հաշվետվությունների ներկայացումը՝ ըստ ենթակառուցվածքի: Ձեռնարկում նկարագրված որակի ապահովման գործընթացները պետք է արտացոլեն տվյալ ՄՈՒՀ-ի առանձնահատկությունները, ինչպես նաև հանրային կարիքների և աշխատաշուկայի հետ կապված յուրահատուկ խնդիրներն ու նպատակները: Ձեռնարկում ներկայացված որակի չափանիշները պետք է համահունչ լինեն ՄՈՒՀ-ի խնդիրներին՝ ամբողջ կազմակերպության, առանձին ֆակուլտետի և մասնագիտության կրթական ծրագրի/ծրագրերի մակարդակում: Ընթացակարգերը պետք է ընդգրկեն, սակայն չսահմանափակվեն սույն փաստաթղթում նկարագրված չափանիշներով:
- 2.1.9 Որակի ներքին ապահովման գործընթացը պետք է տրամադրի վկայություններ վերստուգելի տվյալների ձևով առ այն, որ որակի ապահովման օբյեկտները պատշաճ կերպով դիտարկվել են: Հետևաբար՝ որակի ապահովման օբյեկտները պետք է հստակ սահմանվեն և լինեն ինստիտուցիոնալ կամ ծրագրային խնդիրներին համադրելի, ինչպես նաև պարզ և չափելի: Փաստաթղթերում կատարողականի տվյալների պարբերաբար արձանագրումը կարևոր նշանակություն ունի որակի արդյունավետ պահպանման և բարելավման համար:
- 2.1.10 Գործընթացները պետք է ապահովեն որոշումների պաշտոնական, պարբերաբար և հետևողական ընդունումը և իրականացումը, ինչը պետք է հիմնված լինի մշտադիտարկման ընթացքում բացահայտված արդյունքների վրա: Հիմնական պահանջներից մեկը որակի պահպանման և բարելավման գործողությունների պարբերաբար փաստաթղթավորումն է:
- 2.1.11 Հատուկ ուշադրություն պետք է հատկացվի որակի ապահովման այնպիսի ասպեկտների վրա, որոնք մշտադիտարկման ընթացքում չեն արտահայտվում քանակական տվյալներով: ՄՈՒՀ-ը պետք է որդեգրի համապատասխան քաղաքականություն և ռազմավարություն՝ երաշխավորելու համար, որ այդ ասպեկտները որակի ապահովման ընթացակարգերում չեն շրջանցվել:
- 2.1.12 Յուրաքանչյուր մասնագիտության կրթական ծրագրի/ծառայության շրջանակներում իրականացվող որակի ապահովման գործընթացները պետք է կենտրոնանան

- ծրագրի/ծառայության նպատակների վրա,
- փաստերի վրա, որ ծրագիրը/ծառայությունը հասել է իր նախանշված նպատակներին,
- թերությունները վերացնող և բարելավումներ կատարող գործընթացների արդյունավետության վրա:

Որակի ներքին ապահովման համակարգի որակի հավաստման չափանիշներ

Հաստատության որակի ներքին ապահովման համակարգի արդյունավետությունն ու հուսալիությունը երաշխավորելու համար այն պետք է պարբերաբար ենթարկվի արտաքին գնահատման/փոխգնահատման՝ լիազորված մարմնի կողմից (ԲՈՒՀ-ի ընտրությամբ):

Արտաքին գնահատում/փոխգնահատում իրականացնող մարմինը պետք է

- ունենա պաշտոնական կարգավիճակ,
- առաջնորդվի ՈԱԱԿ-ի չափորոշիչներով, որոնք պետք է համապատասխանեն ԵԶՈւ-ին,
- ունենա համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսներ,
- ունենա հստակ և բացահայտ նպատակներ և խնդիրներ արտահայտող առաքելություն,
- լինի անկախ և ինքնուրույն,
- ունենա որակի ներքին ապահովման ոլորտում հրապարակված քաղաքականություն և համապատասխան փաստաթղթեր (չափանիշներ ու գործընթացներ),
- ունենա հաշվետվողականություն ապահովող մեխանիզմներ,
- կատարի շրջափուլային վերանայումներ և փորձաքննություններ:

2.2. Որակի ներքին ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ

Մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման եվրոպական չափորոշիչները և ուղենիշներն են՝

2.2.1 Որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգ: Հաստատություններն իրենց ծրագրերի, կրթական աստիճանների որակի և չափորոշիչների ապահովման համար պետք է մշակեն քաղաքականություն և դրան առնչվող ընթացակարգեր: Հաստատությունները պետք է հետևողականորեն նպաստեն իրենց աշխատանքում որակի կարևորությունը և ապահովումը գնահատող մշակույթի ձևավորմանը: Այն ձեռք բերելու համար հաստատությունները պետք է զարգացնեն և իրագործեն որակի շարունակական ամրապնդման ռազմավարություն: Հաստատությունները պետք է կարևորեն նաև ուսանողների և բարձրագույն կրթության գործընթացի մասնակիցների դերը:

- 2.2.2 Ծրագրերի և կրթական աստիճանների հաստատում, մշտադիտարկում և պարբերաբար վերանայում:** Հաստատությունները պետք է ունենան ծրագրերի և կրթական աստիճանների հաստատման, պարբերաբար վերանայման և մշտադիտարկման հաստատված մեխանիզմներ:
- 2.2.3 Ուսանողների ուսումնառության գնահատում:** Ուսանողների ուսումնառությունը պետք է գնահատվի ընդունված և հանրությանը հասանելի չափանիշներով, որոնք կիրառվում են համահավասար, սահմանված կարգով և ընթացակարգերով:
- 2.2.4 Դասախոսական կազմի որակի ապահովում:** Հաստատությունները պետք է ունենան որակյալ և բանիմաց անձնակազմով համալրվելու մեխանիզմներ: Դասավանդող անձնակազմը պետք է մասնակցի արտաքին գնահատմանը, և նրանց կատարած աշխատանքի որակի մասին տեղեկատվությունը պետք է արտացոլվի վերջնական գեկույցում:
- 2.2.5 Ուսումնառության ռեսուրսներ և աջակցություն ուսանողներին:** Հաստատությունները պետք է հավաստեն, որ ուսանողներն ապահովված են մասնագիտության կրթական ծրագրերով նախատեսված ռեսուրսներով:
- 2.2.6 Տեղեկատվական համակարգեր:** Հաստատությունները պետք է հավաստեն, որ նրանք իրենց մասնագիտության կրթական ծրագրերի և այլ գործառնությունների կառավարման արդյունավետության համար հավաքագրում, վերլուծում և օգտագործում են պատշաճ տեղեկատվություն:
- 2.2.7 Հրապարակայնություն:** Հաստատությունները պետք է իրենց առաջարկած մասնագիտության կրթական ծրագրերի և կրթական աստիճանների մասին մշտապես հրատարակեն ինչպես քանակական, այնպես էլ որակական նորացված, անաչառ տեղեկատվություն:

Մանրամասների համար տես հավելված 4:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԱԱԿ-Ի ԶԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

ՈԱԱԿ-ի գնահատման չափանիշներն ու չափորոշիչները նախատեսված են կրթական հաստատությունների կողմից հաստատության գործունեության և մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման ընթացքի ինքնավերլուծություն կատարելու և բարելավման կարիք ունեցող ոլորտները բացահայտելու համար:

Նկատի ունենալով, որ կրթական ծառայությունների ողջ շարքն ընդգրկում է բազմաթիվ բաղադրիչներ, ՈԱԱԿ-ն առանձնացրել է որակը գնահատելու և ճանաչելու յոթ տիրույթ:

ՈԱԱԿ-ի կողմից մշակված մասնագիտական կրթության որակի շրջանակը՝ միջոց է, որը թույլ է տալիս ուսումնառության միջավայրի պարբերաբար վերլուծություններ կատարել՝ կրթական գործընթացների որակի տեսանկյունից դիտարկելով ներկա վիճակը և բարելավմանն ուղղված գործողությունները, խոչընդոտները, ինչպես նաև հետագա զարգացմանը միտված նախաձեռնությունները և մտադրությունները: Այն մշակված է ինչպես

հաստատության գործունեության բոլոր տիրույթները ամբողջապես գնահատելու, այնպես էլ դրանցից յուրաքանչյուրը մանրագնին ուսումնասիրելու համար: Որակի շրջանակը նաև որակի արտաքին ապահովման գործընթացների հիմքն է:

Յոթ տիրույթներն են.

1.Ինստիտուցիոնալ կարողություն: Ինստիտուցիոնալ կարողությունը նկարագրում է ուսանողներին կայուն ու բարձրորակ ծառայություններ մատուցելու բաղադրիչները:

2.Կրթական ծրագրեր: Կրթական ծրագրերի ճկունությունն ու համապատասխանությունը արդի շուկայական պահանջներին բարենպաստ նախապայմաններ են ստեղծում հարափոփոխ միջավայրում գործելու ունակ մասնագետներ պատրաստելու համար: Դրանով իսկ կրթական ծրագրերի մշակման, հաստատման, մշտադիտարկման և գնահատման գործում ձեռնարկված հստակ քայլերը կարևոր նշանակություն ունեն որակյալ կրթության պայմաններ ձևավորելու համար:

3.Գիտելիքի կառավարում: Գիտելիքի կառավարումն ուղղված է գիտելիք ձևավորելու գործընթացի արդյունավետությանը, հուսալիությանը, զարգացմանը, ինչպես նաև կիրառելիության ապահովմանը: Այն ընդգրկում է նաև հաստատության կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքների կապակցումը ուսումնական ծրագրի հետ:

4. Ուսանողակենտրոն մոտեցում: Կրթության զանգվածային բնույթը ենթադրում է, որ շրջանավարտները պետք է կարողանան գործունեություն ծավալել հարափոփոխ միջավայրում և ունենան փոխանցելի հմտություններ: Այսպիսի ուղղվածության արդյունքներն առավել արդյունավետ են լինում, երբ ուսանողներն ու դասախոսներն աշխատում են ներդաշնակորեն՝ համագործակցային մթնոլորտում, ուսանողներն ուսումնառության ընթացքում ունենում են ինքնուրույն ու ճկուն լինելու ավելի մեծ հնարավորություն: Արդյունքում ուսանողների մոտ ձևավորվում են գիտելիք ձեռք բերելու հմտություններ, ինչն էլ օգնում է նրանց սովորելու ողջ կյանքի ընթացքում: Այդօրինակ մոտեցման պարագայում փոխվում է նաև դասախոսի դերակատարությունը. նրա գլխավոր նպատակն է դառնում ուսանողների կրթական գործողություններն ուղղորդելու, գիտելիքի յուրացման և կոմպետենցիաների ձեռքբերման գործընթացը կառավարելու գործառնության իրականացումը:

5. Տեղեկատվության կառավարում: Տեղեկատվության ճիշտ կառավարումը վերաբերում է տարբեր մակարդակներում (ներքուհական, ազգային և միջազգային) կատարվող փոփոխությունների վերաբերյալ հիմնավորված և նորացվող տեղեկությունների հավաքագրմանը, վերլուծությանն ու տարածմանը: Հարկ է նշել, որ գործընթացի արդյունավետության համար կարևոր նշանակություն ունի թափանցիկության և հրապարակայնության ապահովումը:

6. Ֆինանսավորում: Ֆինանսավորման մեխանիզմները կարևոր նշանակություն ունեն որակյալ կրթության ապահովման գործում՝ անհատների ու հասարակության համար մատչելի կրթություն ապահովելու համար համապատասխան ռեսուրսներ ձևավորելով, ինչպես նաև հեռանկարներ ստեղծելով ինստիտուցիոնալ զարգացման համար:

7.Որակի մշակույթ: Որակը էապես կախված է ուսումնական հաստատություններում

ձևավորված մշակույթից, որը ենթադրում է վերլուծական գործունեություն, թափանցիկություն և շարունակական բարելավում: Ուստի Որակի կենտրոնը կարևորում է որակի ներքին ապահովման կայուն մեխանիզմներ ապահովող որակի մշակույթի դերը, ինչպես նաև ուսումնառության որակը:

Այս յոթ տիրույթներից յուրաքանչյուրի համար ՈԱԱԿ-ը սահմանել է չափանիշներ և չափորոշիչներ: Սահմանված չափանիշները ուսումնական հաստատությունների կողմից պետք է ընկալվեն որպես որակի ապահովման համար անհրաժեշտ ուղենիշներ: Յոթ տիրույթներից յուրաքանչյուրի համար դրանք ձևակերպված են որպես բազմաձևության և նորարարության որոշակի ազատություն ապահովող տարածական սահմանումներ՝ ելնելով տարբեր հաստատությունների բնույթի, որդեգրած կրթական հայեցակարգերի և նպատակների միջև առկա էական տարբերություններից: Այդ ամենով հանդերձ, չափանիշները սահմանված են բավարար հստակությամբ՝ հավաստիանալու համար, որ ընդունելի որակի կարևոր ասպեկտները առկա են ձևակերպումներում: Հավատարմագրվածի կարգավիճակ ձեռք բերելու համար հաստատությունները պետք է գնահատվեն սահմանված բոլոր չափանիշներով:

Չափանիշները հատուկ առանձնացված ձևակերպումներ են, որոնք վերստուգելի տերմիններով սահմանում են հաստատության գործունեության կամ իրականացվող կրթական ծրագրերի բնութագրերը:

Չափորոշիչները ձևակերպումներ են, որոնք սահմանում են յուրաքանչյուր չափանիշին համապատասխանելու չափը, անաչառ գնահատելու համար անհրաժեշտ պայմանները:

ՈԱԱԿ-ի սահմանած չափանիշները, չափորոշիչներն ու կատարողականի ցուցիչները պարբերաբար վերանայվում են՝ երաշխավորելու համար, որ դրանք վավեր են, արդիական և համապատասխանում են հավատարմագրման և որակի ապահովման ոլորտում առկա վերջին միջազգային միտումներին և զարգացումներին:

1. Ինստիտուցիոնալ փորձաքննություն

Անվանակարգ	Չափանիշներ	Չափորոշիչներ
1. Առաքելություն- նը և նպատակը	<i>Մասնագիտական ուսումնական հաստատության (ՄՈՒՀ) որդեգրած առաքելությունը և նպատակները համահունչ են ՀՀ որակավորումների ազգային շրջանակին</i>	1.1. ՄՈՒՀ-ն ունի որակավորումների ազգային շրջանակին համահունչ և հստակ ձևակերպված առաքելություն, որում արտացոլված են հաստատության սահմանած նպատակները և խնդիրները 1.2. ՄՈՒՀ-ի առաքելությունն արտացոլում է ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

	<p>և համապատասխանում են հաստատության վարած քաղաքականությանն ու ծավալած գործունեությանը:</p>	<p>1.3. Հաստատության ներքին շահակիցներն ընդունում և նպաստում են ՄՈՒՀ-ի առաքելության իրականացմանը: 1.4. ՄՈՒՀ-ն ունի առաքելության ու նպատակների իրականացման նվաճումները գնահատելու պաշտոնապես սահմանված մեխանիզմներ և ընթացակարգեր:</p>
<p>2. Կառավարման ու վարչարարությունը</p>	<p>Հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու էթիկայի նորմերին համապատասխան կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:</p>	<p>2.1 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը և վարչական կառույցները, դրանց գործառնումը արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի նորմերը: 2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել՝ իրենց վրա ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդեցություն ունեցող որոշումներ կայացնելու գործընթացներում: 2.3 ՄՈՒՀ-ը, համապատասխան իր առաքելությանն ու նպատակներին, իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում: 2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և դրա արդյունքներն օգտագործում իր գործունեության արդյունավետությանը բարելավելու նպատակով:</p>
<p>3. Որակի ներքին ապահովման համակարգ</p>	<p>ՄՈՒՀ-ն ունի որակի ներքին ապահովման ենթակառուցվածք, որն ապահովում է որակի ընդհանուր կառավարումը՝ համապատասխան</p>	<p>3.1 ՄՈՒՀ-ը տրամադրում է ժամանակ, նյութական, մարդկային և ֆինանսական բավարար ռեսուրսներ որակի ներքին ապահովման գործընթացները կառավարելու նպատակով: 3.2 ՄՈՒՀ-ն ունի իրականացվող</p>

	<p>«Որակի ապահովման եվրոպական չափորոշիչների և ուղենիշների» (ՈՍԵՉՈՒ/ESG):</p>	<p>մասնագիտական կրթական ծրագրերի և դրանց համաձայն շնորհվող որակավորումների որակի ու չափորոշիչների ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր: Յուրաքանչյուր մասնագիտական կրթական ծրագրի ռազմավարությունը և նպատակները պաշտոնապես հաստատված են և հանրությանը հասանելի: Որակի ապահովման գործընթացներում կարևորվում է ուսանողների և այլ շահակիցների դերը:</p> <p>3.3 ՄՈՒՀ-ն ունի իր կրթական ծրագրերի մշակման, հաստատման, պարբերաբար վերանայման և մշտադիտարկման գործընթացների գնահատման պաշտոնապես հաստատված մեխանիզմներ:</p> <p>3.4 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման արդյունավետությունը չափող մեխանիզմներ:</p> <p>3.5 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակների արդյունավետությունը գնահատելու մեխանիզմներ: Այդ մեխանիզմները հասանելի են արտաքին գնահատում իրականացնողներին, որոնց զեկույցներում կա անդրադարձ:</p> <p>3.6 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասախոսներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:</p> <p>3.7 Մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետ իրագործման նպատակով ՄՈՒՀ-ում գործում են տեղեկատվության հավաքումը, վերլուծումը և կիրառումը գնահատող</p>
--	--	--

		մեխանիզմներ:
		<p>3.8 ՄՈՒՀ-ում գործում են մեխանիզմներ, որոնք գնահատում են բոլոր հրապարակումները՝ երաշխավորելով, որ դրանք թարմացված են, անկողմնակալ և օբյեկտիվ քանակական և որակական տեղեկատվություն են պարունակում, ինչպես նաև ընդգրկում են հաստատության կրթական ծրագրերն ու դրանց սահմաններում շնորհող որակավորումները:</p> <p>3.9 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:</p>
<p>4. Արտաքին կապեր և միջազգայնացում</p>	<p><i>Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով միջազգայնացմանը:</i></p>	<p>4.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ը գործող քաղաքականության և ընթացակարգերի միջոցով խրախուսում է արտաքին կապերի հաստատումը:</p> <p>4.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ենթակառուցվածքը երաշխավորում է բնականոն գործընթաց:</p> <p>4.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների հետ:</p> <p>4.4 ՄՈՒՀ-ը միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ապահովում է հաստատությունում օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակը:</p>
<p>5. Ուսումնառողներ</p>	<p><i>Կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով ՄՈՒՀ-ն ուսումնառողներին</i></p>	<p>5.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսնողների հավաքագրման, ընտրման և ընդունելության հստակ մեխանիզմներ:</p> <p>5.2 Ուսանողների ուսումնառությանը նպաստելու համար ՄՈՒՀ-ը</p>

	<p><i>տրամադրում է խորհրդատվական և աջակցության ծառայություններ:</i></p>	<p>լրացուցիչ պարապմունքների կազմակերպման հնարավորություններ է ստեղծում:</p> <p>5.3 Հավելյալ օժանդակություն և ուղղորդում ստանալու համար ուսանողներին վարչական աշխատակազմին դիմելու հատուկ ժամեր են նշանակված:</p> <p>5.4 Ուսանողների կարիերայի աճին նպաստող հատուկ ծառայությունների միջոցով ՄՈՒՀ-ը նրանց նախապատրաստում է ապագա աշխատանքի:</p>
		<p>5.5 ՄՈՒՀ-ում գործում են հաստատության կառավարման գործընթացում ուսումնառողների ակտիվ ներգրավվածությանը նպաստող քաղաքականություն և ընթացակարգեր:</p> <p>5.6 Ուսումնառողները ակտիվորեն ներգրավվում են հաստատության համար գերակա գիտահետազոտական աշխատանքներում:</p> <p>5.7 Ուսումնառողները ներգրավված են հաստատության գործունեության գնահատման գործընթացներում:</p> <p>5.8 ՄՈՒՀ-ում գործում է ուսումնառողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:</p> <p>5.9 Ուսումնառողները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:</p>
<p>6. Դասախոսական և օժանդակ կազմ</p>	<p><i>Մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներն իրականացնելու համար ՄՈՒՀ-ն ապահովված է մասնագիտական անհրաժեշտ</i></p>	<p>6.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար մասնագիտական անհրաժեշտ որակներ ունեցող դասախոսական կազմի հավաքագրման քաղաքականություն և ընթացակարգեր:</p> <p>6.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական</p>

	<p><i>որակներ ունեցող դասախոսական և օժանդակ կազմով:</i></p>	<p>ծրագրի համար սահմանված են դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:</p> <p>6.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:</p> <p>6.4 ՄՈՒՀ-ը նպաստում է դասախոսների մասնագիտական զարգացմանը՝ համաձայն պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքների:</p> <p>6.5 Հիմնական դասախոսական կազմը ապահովում է մասնագիտությունների կրթական ծրագրերի սահմաններում շնորհվող անհրաժեշտ որակավորումների ծավալը:</p> <p>6.6 ՄՈՒՀ-ը մշակել է դասախոսական կազմի, մասնավորապես՝ երիտասարդ դասախոսների խարախուսման քաղաքականություն և ընթացակարգեր:</p> <p>6.7 ՄՈՒՀ-ն ունի իր ռազմավարական նպատակներին հասնելու համար անհրաժեշտ վարչական և օժանդակ աջխատակազմ:</p>
<p>7. Մասնագիտության կրթական ծրագրեր</p>	<p><i>Մասնագիտությունների կրթական ծրագրերը համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման և ռեսուրսների բաշխման մաս,</i></p>	<p>7.1 Կրթական ծրագրերը մանրամասն ձևակերպված են՝ ըստ շնորհվող որակավորումների համապատասխան ակնկալվող ուսումնառության արդյունքների:</p> <p>7.2 Մասնագիտության կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքները բավարարում են ուսումնառողների և այլ շահակիցների կարիքները:</p> <p>7.3 Մասնագիտության կրթական ծրագրերը մշտադիտակվում են, իսկ</p>

	<p><i>համապատասխանում են ազգային պահանջներին, ուսումնառողների և այլ շահակիցների կարիքներին և բովանդակային առումով համոզիչ են:</i></p>	<p>դրանց արդյունավետությունը պարբերաբար գնահատվում է:</p> <p>7.4 Նպաստելով ակադեմիական ազնվությանը՝ մասնագիտությունների կրթական ծրագրերն ապահովում են ուսումնառողների՝ ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան գնահատում:</p> <p>7.5 Մասնագիտության կրթական ծրագրերը բովանդակային առումով հուսալի են, հստակ մշակված և համահունչ են նմանատիպ այլ կրթական ծրագրերի հետ և նպաստում են ուսումնառողների և դասախոսական կազմի շարժունությանը:</p>
<p>8. Հետազոտություն և զարգացում</p>	<p><i>ՄՈՒՀ-ը նպաստում է հետազոտական նպատակների, նախագծերի իրականացմանը և ակնկալվող արդյունքների ձեռքբերմանը: Առկա է հետազոտական ավանդույթ և մշակույթ, ինչպես նաև հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացման մեխանիզմներ:</i></p>	<p>8.1 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտական ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:</p> <p>8.2 ՄՈՒՀ-ը հստակ քաղաքականության ու ընթացակարգերի միջոցով նպաստում է հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին:</p> <p>8.3 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:</p> <p>8.4 ՄՈՒՀ-ն ունի հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացը փոխկապակցելու հստակ մեխանիզմներ:</p> <p>8.5 ՄՈՒՀ-ն ունի հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացը փոխկապակցելու հստակ մեխանիզմներ:</p>
<p>9. Ենթակառուցվածք և ռեսուրսներ</p>	<p><i>ՄՈՒՀ-ն ունի սեփականություն և անհրաժեշտ</i></p>	<p>9.1 ՄՈՒՀ-ն ունի առաջարկվող մասնագիտությունների կրթական ծրագրերին համապատասխան</p>

	<p><i>ռեսուրսներ, որոնք նպաստում են սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացմանն ու ուսումնական միջավայրի ստեղծմանը:</i></p>	<p>ուսումնական միջավայր:</p> <p>9.2 ՄՈՒՀ-ը ձգտում է ապահովել և ճիշտ բաշխել բավարար ֆինանսական ռեսուրսներն իր առաքելությանն ու նպատակներին հասնելու համար անհրաժեշտ միջոցները և սարքավորումներն ապահովելու, կիրառելու և գործարկելու համար:</p> <p>9.3 ՄՈՒՀ-ն ունի ֆինանսական ռեսուրսների բաշխման ճիշտ քաղաքականություն՝ հաստատությունում իրականացվող մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակայնությունն ու անխախտ ընթացքը երաշխավորելու և ապահովելու համար:</p> <p>9.4 Որակի շարունակական բարելավումն ու կայունությունը ապահովելու նպատակով ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան օժանդակում է մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացումը:</p> <p>9.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:</p> <p>9.6 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունը կատարվում է որակի ընդհանուր կառավարման սկզբունքով:</p> <p>9.7 ՄՈՒՀ-ը առողջապահական և անվտանգությանն պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր՝ հաշվի առնելով հատուկ կարիք ունեցող ուսումնառողներին:</p>
<p>10. Հասարակ ական պատասխանատ</p>	<p><i>ՄՈՒՀ-ը հաշվետու է կառավարությանը, գործատուներին և</i></p>	<p>10.1 Հետադարձ կապի կայուն մեխանիզմների միջոցով ձևավորվել է ամուր կապեր հասարակության հետ:</p>

<p>-վություն</p>	<p><i>հասարակությանը, որ իր տրամադրած կրթությունը և օգտագործած ռեսուրսները համապատասխանում են իրենց նպատակներին:</i></p>	<p>10.2 ՄՈՒՀ-ն ունի մեխանիզմներ, որոնք ապահովում են գիտելիքի փոխանցումը հասարակություն:</p>
-------------------------	--	---

2.Ծրագրային հավատարմագրում

Անվանակարգ	Չափանիշներ	Չափորոշիչներ
<p>1. Մասնագիտության կրթական ծրագրի մշակում և հաստատում</p>	<p><i>Մասնագիտության և կրթական ծրագրերը (այսուհետ՝ ԿԾ) համապատասխանում է մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) առաքելությանը, հանդիսանում է ՄՈՒՀ-ի պլանավորման և ռեսուրսների բաշխման մաս, համապատասխանում է ՀՀ որակավորումների ազգային շրջանակի (այսուհետ՝ ՈԱՇ) պահանջներին և ուսումնառողների ու այլ շահակիցների կարիքներին, բովանդակային առումով հուսալի է:</i></p>	<p>1.1 Մասնագիտության կրթական ծրագրի նպատակները և խնդիրները համահունչ են ուսումնական հաստատության առաքելությանը և նպատակներին:</p> <p>1.2 Կրթական ծրագրերը մանրամասն ձևակերպված են՝ ըստ շնորհվող որակավորումների համապատասխան ակնկալվող ուսումնառության արդյունքների:</p> <p>1.3 Մասնագիտության կրթական ծրագրի ուսումնառության ակնկալվող արդյունքները բավարարում են ուսումնառողների և այլ շահակիցների կարիքները:</p> <p>1.4 Մասնագիտության կրթական ծրագրերը բովանդակային առումով հուսալի է, հստակ մշակված և համահունչ է նմանատիպ այլ կրթական ծրագրերի հետ և նպաստում է ուսումնառողների և դասախոսական կազմի շարժունությանը:</p> <p>1.5 ԿԾ համապատասխանում է մասնագիտական կրթության բնութագրիչներին և բավարարում է կարիքները:</p> <p>1.6 Կրթական ծրագիրն ապահովված է իր բովանդակությունը բավարարող ուսումնամեթոդական անհրաժեշտ բազայով:</p>

<p>2. Դասախոսական կազմ</p>	<p><i>Մասնագիտական կրթական ծրագրի նպատակներն իրականացնելու համար ՄՈՒՀ-ն ապահովված է մասնագիտական անհրաժեշտ որակներ ունեցող դասախոսական կազմով:</i></p>	<p>2.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար մասնագիտական անհրաժեշտ որակներ ունեցող դասախոսական կազմի հավաքագրման քաղաքականություն և ընթացակարգեր:</p> <p>2.2 ՄՈՒՀ-ի մասնագիտության կրթական ծրագրի համար սահմանված են դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացնող հստակ պահանջներ:</p> <p>2.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:</p>
		<p>2.4 ՄՈՒՀ-ը նպաստում է դասախոսների մասնագիտական զարգացմանը՝ համաձայն պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքների:</p> <p>2.5 Հիմնական դասախոսական կազմն ապահովում է մասնագիտության կրթական ծրագրի սահմաններում շնորհվող անհրաժեշտ որակավորումների ծավալը:</p> <p>2.6 ՄՈՒՀ-ը մշակել է դասախոսական կազմի, մասնավորապես՝ երիտասարդ դասախոսների խրախուսման քաղաքականություն և ընթացակարգեր:</p>
<p>3. Ուսուցման (դասավանդման և ուսումնառության) մեթոդներ</p>	<p><i>ԿԾ-ի սահմաններում կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդները ապահովում են սովորողների մոտ ուսումնառության արդյունքների ձեռքբերումը, ինչը վկայում է նաև</i></p>	<p>3.1 ԿԾ-ում հստակորեն սահմանվում են դասավանդման ու ուսումնառության մեթոդները և մոտեցումները, որոնք անհրաժեշտ են ուսումնառության ակնկալվող արդյունքներն ապահովելու համար:</p> <p>3.2 Առկա են դասավանդման և ուսումնառության մոտեցումների որակը գնահատելու մեխանիզմներ:</p>

	<i>պրոֆեսորադասա խոսական կազմի աշխատանքի արդյունավետությ ան մասին:</i>	
4. Հետազոտական և ստեղծագործակ ան գործունեություն	<i>ՄՈՒՀ-ը նպաստում է հետազոտական նպատակների, նախագծերի իրականացմանը և ակնկալվող արդյունքների ձեռքբերմանը: Առկա է հետազոտական ավանդույթ և մշակույթ, ինչպես նաև հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացման մեխանիզմներ:</i>	<p>4.1 Կրթական ծրագիրն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտական ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:</p> <p>4.2 Կրթական ծրագիրը հստակ քաղաքականության ու ընթացակարգերի միջոցով նպաստում է հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին:</p> <p>4.3 Կրթական ծրագիրը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:</p>
		<p>4.4 ՄՈՒՀ-ն ունի հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացը փոխկապակցելու հստակ մեխանիզմներ:</p> <p>4.5 ՄՈՒՀ-ում առկա են հետազոտական և ստեղծագործական գործունեության որակն ապահովող մեխանիզմներ: The programme emphasizes internationalization of the researc</p>
5. Ուսումնառողներ ի գնահատում	<i>Նպաստելով ակադեմիական ազնվությանը՝ մասնագիտությու նների կրթական ծրագրերն ապահովում են ուսումնառողների</i>	<p>5.1 ԿԾ-ում գնահատվում է սովորողի ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը՝ ըստ ուսումնառողի ուղեցույցում ներկայացված պահանջների:</p> <p>5.2 ՄՈՒՀ-ը հստակ սահմանած քաղաքականության և ընթացակարգերի միջոցով հավասար և անաչառ մոտեցում է ցուցաբերում ուսումնառողներին՝</p>

	<i>ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան ն գնահատում:</i>	հաշվի առնելով նրանց պարտականությունները և բողոքները: 5.3 ՄՈՒՀ-ը խրախուսում է ուսումնառողի ուսումնագիտական ինքնուրույնությունը և պայքարում գրագողության դեմ:
6. Կրթական միջավայր	<i>ՄՈՒՀ-ը նպաստում է որակյալ կրթություն իրականացնելուն , ուսումնառության համար բարենպաստ միջավայր ձևավորելով</i>	6.1 ԿԾ-ն ունի սեփականություն և անհրաժեշտ ռեսուրսներ, որոնք նպաստում են սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացմանն ու ուսումնական միջավայրի ստեղծմանը: 6.2 ԿԾ-ի սահմաններում ուսումնառողներին ժամանակին և պարբերաբար տրամադրվում են ուսումնառությանը նպաստող օգտակար ու մատչելի տեղեկություն և խորհրդատվություն:
7. Որակի ապահովում	<i>Կրթական ծրագիրն ունի որակի ներքին համակարգ, որը նպաստում է իր պահպանումը և շարունակական զարգացումը:</i>	7.1 ՄՈՒՀ-ը մշտապես թարմացնում և կատարելագործում է ԿԾ-ն՝ շուկայի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով: 7.2 ԿԾ-ը նախատեսում է հետադարձ կապ, որը թույլ է տալիս կրթական նպատակների տեսանկյունից գնահատել ուսումնառողների ձեռքբերումները: 7.3 ՄՈՒՀ-ում առկա են կրթական ծրագրի որակի ներքին ապահովման արդյունավետ քաղաքականություն և ընթացակարգ(եր): 7.4 Որակի պահովման համակարգը մշակված է և գործում է հետևելու համար հասարակական կարիքներին և ուսումնառողների պահանջներին, ինչպես նաև իր գործառնումը ստուգելու համար:

3.Ինստիտուցիոնալ փորձաքննության և մասնագիտության կրթական ծրագրերի հավատարմագրման ընթացակարգեր

- 3.1 ՄՈՒՀ-երը, որոնք պատրաստվում են դիմել ինստիտուցիոնալ փորձաքննության և/կամ մասնագիտությունների ծրագրերի հավատարմագրման համար, պետք է դիմում-հայտ ներկայացնեն ՈԱԱԿ:
- 3.2 Այն ՄՈՒՀ-երը, որոնք ունեն որակի ապահովման ներքին համակարգ, դիմում-հայտին կից պետք է ներկայացնեն համակարգի գործունեության մանրամասն

նկարագրությունը, որտեղ պետք է անդրադառնան սույն փաստաթղթի՝ որակի ներքին ապահովմանը վերաբերող բոլոր դրույթներին: Այն պետք է ներառի ՄՈՒՀ-ի կամ ֆակուլտետի որակի ապահովման ձեռնարկը և այն փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը հիմնավորելու համար:

3.3 Եթե ՄՈՒՀ-ը դիմում է նախքան որակի ապահովման ներքին համակարգի ներդնելը, ապա այդ հաստատությունը պետք է ՈԱԱԿ-ի հետ համաձայնեցնի տվյալ գործընթացներն իրականացնելու ընթացակարգերը: Միջանկյալ ժամանակահատվածում ՈԱԱԿ-ի կողմից կանցկացվի պայմանական հիմունքներով ինստիտուցիոնալ փորձաքննություն՝ ըստ ՈԱԱԿ-ի հետ որակի ապահովման ընթացակարգերի մասին կնքված պայմանագրի: Եթե ՄՈՒՀ-ը ՈԱԱԿ-ի կողմից նախանշված ժամանակահատվածում չի ներդնում պայմանագրով նախատեսված որակի ապահովման ընթացակարգերը, ապա ՈԱԱԿ-ը իրավասու է վերանայել իր որոշումը և ընդհատել տվյալ գործընթացը ՄՈՒՀ-ի հետ:


3.4 Դիմում-հայտին կից ՈԱԱԿ պետք է ներկայացվի պահանջվող փաստաթղթերի փաթեթի վեց օրինակ, ինչպես նաև էլեկտրոնային տարբերակը: Ցանկալի է խորհրդակցել ՈԱԱԿ-ի անձնակազմի հետ ինքնավերլուծության համապատասխան ձևաչափի ընտրության շուրջը:

3.5 Ստանալով դիմումը՝ ՈԱԱԿ-ը կուսումնասիրի փաստաթղթերը և կգնահատի կատարած աշխատանքների արդյունավետությունը: Այդ ընթացքում ՄՈՒՀ-ի ղեկավարության և համապատասխան անձնակազմի հետ հանդիպումներ ու քննարկումներ կկազմակերպվեն որակի ապահովման գործընթացների շուրջ: Արդյունքում կազմված արձանագրությունների միջոցով կպարզվի գործընթացների արդյունավետության աստիճանը:

3.6 ՈԱԱԿ-ը ակնկալում է, որ ՄՈՒՀ-ը որակի ապահովման բոլոր գործընթացների համար կիրառում է հստակ սահմանված ընթացակարգեր: Դիմումը ստանալուց հետո ՈԱԱԿ-ը՝ որպես առանձին գործընթաց, գնահատելու է որակի ապահովման ընդհանուր ընթացակարգերը: Ինստիտուցիոնալ փորձաքննության և/կամ մասնագիտությունների ծրագրային հավատարմագրման առանձնահատուկ դեպքերում (օր.՝ կլաստերային, պարտադիր հավատարմագրման ենթակա ծրագրերի, և այլն) կարող են կատարվել ընդհանուր ընթացակարգերի որոշ ճշտումներ:

4. ՈԱԱԿ-ի Գնահատման սկզբունքները

ՈԱԱԿ-ը առաջարկում է հետադարձ կապի վրա հիմնված կառավարման գնահատման հետևյալ մոդելը, որը կնպաստի կառավարման արդյունավետության բարձրացմանը:



Կատարողականի ցուցիչները սովորաբար վերցվում են բոլոր դաշտերից՝ ներդրումներ, գործընթացներ, արդյունքներ և բարելավում:

Ներդրումներ դաշտը հիմնականում շեշտադրում է կրթական գործընթացի կազմակերպումը, քաղաքականությունը, ընթացակարգերը, ռազմավարական պլանում դրված խնդիրներին հասնելու համար ռեսուրսները և անձնակազմի ներուժը, ինչպես նաև գործընթացի արդյունավետ կառավարումը երաշխավորող որակի ապահովման մեխանիզմները:

Գործընթացներ դաշտը շեշտադրում է կրթական գործընթացները, մասնավորապես այն գործողությունները, որոնք ուղղված են ռազմավարության, պլանավորման և ուղղորդող ընթացակարգերի իրականացմանը: Հատկապես կարևոր է նախանշված խնդիրների իրականացման գործում ներգրավված անձնակազմի ներուժը: Այս հաստատում ինքնագնահատման համար պատասխանատու որակի ապահովման անձնակազմը պետք է վերլուծի այն քայլերը, որոնք ձեռնարկված են նպատակներին հասնելու համար:


Արդյունքներ դաշտը նախանշում է այն քանակական և որակական ցուցիչները, որոնք սահմանում են, թե արդյոք մասնագիտության կրթական ծրագրի/հաստատության նպատակները իրագործված են: Մոդելի երկու դաշտերը՝ **ներդրումներ** և **արդյունքներ**, չափվում են ըստ համապատասխանության: Դա արվում է ծրագրային գնահատման, ուսումնառողների, շրջանավարտների, դասախոսների և գործատուների հետադարձ կապի տվյալների խոր վերլուծության միջոցով: Կան նաև ցուցանիշները չափելու այլ մեթոդներ, օր.՝ վիճակագրության վերլուծությունը, հարցումները, խմբային քննարկումները, համադրական գնահատումը, դրսի գործընկերների դիտարկումը և այլն: Արդյունքները բացահայտելու համար կարելի է կիրառել նաև ոչ պաշտոնական այնպիսի եղանակներ, ինչպիսին են, օրինակ, թիմային գնահատումները կամ արտասահմանյան գործընկերների հետ անցկացվող քննարկումները:

Բարելավում դաշտում կատարվում են պլանների վերանայում, շտկումներ և/կամ վերամշակում: Եթե ՄՈՒՀ-ը չի հասել իր սահմանած նպատակներին, ապա այս փուլում

այն պետք է ձեռնարկի բարելավմանն ուղղված համապատասխան միջոցառումներ, որոնք պետք է ներառվեն բարելավման ծրագրերում:

Ինստիտուցիոնալ/ծրագրային ինքնագնահատումը փորձագիտական գնահատման փուլ անցնելու մեկնակետն է: Փորձագիտական գնահատման հիմնական սկզբունքները հետևյալն են.

Ինստիտուցիոնալ և ծրագրային կառավարման սահուն ընթացքը ապահովելու համար, ինչը կնպաստի կրթական գործընթացների որակի բարելավմանը, ՈԱԱԿ-ը՝ որպես ինստիտուցիոնալ և ծրագրային ինքնագնահատման գլխավոր սկզբունք, որդեգրել է Որակի ընդհանուր կառավարման (TQM) մոտեցումը: Հետևաբար՝ որակի ընդհանուր կառավարումը պետք է կիրառվի վերը նշված յուրաքանչյուր դաշտում (ներդրում-գործընթաց-արդյունքներ-բարելավում)



- **Պլանավորում**՝ խնդիրների սահմանում և դրանց լուծման, չափման միջոցների ձևակերպում,
- **Իրականացում**՝ միջոցառումների իրականացում,
- **Ստուգում և վերանայում**՝ իրականացման ընթացիկ և շրջափուլային գնահատում, որը որոշում է՝ արդյո՞ք արձանագրված արդյունքները համահունչ են պլանավորված խնդիրներին,
- **Բարելավում**՝ պլանների ամփոփում և/կամ վերաշտկում՝ նկատի ունենալով ընդհանուր գնահատման արդյունքները և շահակիցների արձագանքը: Անհրաժեշտության դեպքում նոր խնդիրներ են դրվում: Դա նշանակում է, որ կրթական ծրագրի որակը կախված է ոչ միայն գործընթացի համարժեքությունից, այլ նաև այն բանից, թե ինչպես են այդ գործընթացները վերահսկվում ձեռք բերված արդյունքների տեսանկյունից:

Գնահատման ընթացքում փորձագետները որպես հիմք պետք է ընդունեն հետևյալ փաստաթղթերը.

- ՀՀ կառավարության կողմից հաստատված լիցենզավորման կարգով՝ ըստ հավելվածների սահմանված պահանջները և պայմանները
- հաստատության կանոնադրությունը,
- ՄՈՒՀ-ի՝ կառավարման մարմնի կողմից հաստատված ռազմավարական պլանը,
- ինքնավերլուծությունը,
- շահակիցների արձագանքները հաստատության գործունեության վերաբերյալ:

Գնահատման նիշերը հետևյալն են՝

- (5) **Գերազանց**՝ Թե՛ հաստատության գործունեությունը և թե՛ մասնագիտության կրթական ծրագրերի իրականացումը միջազգային մակարդակում ցուցադրում են բարձր մրցունակություն և նշանակալի ներդրման ակնակալիք: Վերջնական արդյունքն ունի կարևոր և շոշափելի ազդեցություն տվյալ ոլորտի համար: Փորձագետների կողմից ձեռք բերված տվյալները բոլոր ոլորտներում արձանագրում են առկա բարձր ցուցանիշներ:
- (4) **Լավ**՝ Թե՛ հաստատության գործունեությունը և թե՛ մասնագիտության կրթական ծրագրերի կատարումը ցուցադրում են միջազգային մակարդակում ընդգրկված լինելու որոշակի աստիճան: Վերջնական արդյունքն ունի կարևոր և շոշափելի ազդեցություն ազգային շրջանակներում: Փորձագետների կողմից ձեռք բերված տվյալները բոլոր տիրույթներում արձանագրում են առկա բարձր ցուցանիշներ՝ չափորոշիչներով սահմանված շեմից ոչ նշանակալի շեղումներով:
- (3) **Բավարար**՝ Թե՛ հաստատության գործունեությունը և թե՛ մասնագիտության կրթական ծրագրերի իրականացումը մրցունակ են ազգային շրջանակներում և դրսևորում են միջազգային ընդգրկվածության որոշ միտումներ: Վերջնական արդյունքն ունի կարևոր և շոշափելի ազդեցություն ազգային շրջանակներում: Փորձագետների կողմից ձեռք բերված տվյալները բոլոր տիրույթներում արձանագրում են առկա միջին ցուցանիշներ՝ չափորոշիչներով սահմանված շեմից որոշակի շեղումներով:
- (2) **Անբավարար**՝ Թե՛ հաստատության գործունեությունը և թե՛ մասնագիտության կրթական ծրագրերի իրականացումը կայուն են և սկզբունքորեն աջակցության արժանի: Այնուամենայնիվ, արդյունքը մեծապես չի ազդում երկրի զարգացման վրա և, հետևապես, հետաքրքրություն չի առաջացնում: Այն պակաս առավելություններ ունի ոլորտում, քան վերը նշված կարգերում: Փորձագետների կողմից ձեռք բերված տվյալները բոլոր տիրույթներում արձանագրում են առկա ցածր ցուցանիշներ՝ չափորոշիչներով սահմանված շեմից շոշափելի շեղումներով:
- (1) **Շատ վատ**՝ Թե՛ հաստատության գործունեությունը և թե՛ մասնագիտության կրթական ծրագրերի իրականացումը կայուն չեն և աջակցության ոչ արժանի: Արդյունքը բացարձակապես չի ազդում երկրի զարգացման վրա: Փորձագետների կողմից ձեռք բերված տվյալները բոլոր տիրույթներում արձանագրում են առկա վատ ցուցանիշներ՝ չափորոշիչներով սահմանված շեմից նշանակալի շեղումներով:

Գնահատման վերջնական նիշն առաջանում է փորձագիտական եզրակացության արդյունքում, որից հետո ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝

- **Ընդունելի**՝ համապատասխանում է չափորոշիչներով սահմանված նվազագույն շեմային պահանջներին և գերազանցում դրանք,

- Պայմանականորեն ընդունելի՝ համապատասխանում է չափորոշիչներով սահմանված նվազագույն շեմային պահանջներին, սակայն հետագա վերամշակման կարիք ունի,
- Մերժելի՝ չի համապատասխանում չափորոշիչներով սահմանված նվազագույն շեմային պահանջներին

ՈԱԱԿ-ի կողմից առանձնացված չափանիշները, չափորոշիչները և կատարողականի ցուցիչները պարբերաբար վերանայվում և փոփոխվում են՝ հավաստելու դրանց արդիականությունը, պիտանիությունը, համարժեքությունը և համապատասխանությունը որակի ապահովման և հավատարմագրման ոլորտում առաջացող նոր միտումներին և զարգացումներին:

ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

1. Ուղենիշներ և չափանիշներ

- 1.1. ՈԱԱԿ-ը որակի արտաքին ապահովման գործընթացները իրականացնելու համար կիրառվող բարձր որակավորում ունեցող փորձագետների, որոնք կատարելու են փաստաթղթերի նախնական ուսումնասիրություն և կազմելու են զեկույց որակի ապահովման ամբողջ գործընթացի վերաբերյալ (ինստիտուցիոնալ փորձաքննություն և/կամ ծրագրային հավատարմագրում)²
- 1.2. Արտաքին փորձագետների ընտրությունը կարևոր նշանակություն ունի, քանի որ հավատարմագրման մասին որոշումների միջազգային ճանաչումը սերտորեն կապված է արտաքին փորձագետների ընտրության չափանիշների և ընթացակարգերի հետ: Ուստի՝ Հավատարմագրման եվրոպական կոնսորցիումի (2005) անդամները համաձայնության են եկել հետևյալ սկզբունքների շուրջը.
 - Փորձագետների խումբ կազմելու վերաբերյալ ցանկացած որոշում պետք է հիմնված լինի հավատարմագրող կազմակերպության կանոնների և կարգերի կամ համապատասխան օրենսդրության վրա: Ընտրության գործընթացը պետք է լինի ամբողջությամբ թափանցիկ:
 - Հավատարմագրվող հաստատությունները և այլ կառույցները պետք է ունենան փորձագետների ընտրության հնարավորություն:
 - Հավատարմագիր շնորհելու մասին որոշումները կայացվում են ոչ թե փորձագետների խմբերի, այլ հավատարմագրող կազմակերպության կողմից:
 - Փորձագետները պետք է լինեն անկախ և ունենան անկողմնակալ որոշումներ կայացնելու հնարավորություն:
 - Ելնելով հավատարմագրման գործընթացի խնդիրներից՝ պետք է կազմվի տարբեր ոլորտներում փորձառություն ունեցող փորձագետների այնպիսի խումբ, որը կունենա համապատասխան ներուժ՝ նշված ընթացակարգերը

արդյունավետ իրականացնելու համար:

- 1.3. Մասնագետներն ու ուսումնառողները, որոնք հանդես են գալիս որպես փորձագիտական թիմի անդամներ, և գործընթացը համակարգողները ընտրվում են ՈԱԱԿ-ի ազգային և միջազգային փորձագետների բազայից: Նրանք պետք է ունենան որակի ապահովման գործընթացների հիմնական միջոցառումները անցկացնելու հմտություններ: Մասնավորապես, փորձագետներն ընտրվելու են գրավոր և բանավոր հաղորդակցման բարձր ունակությունների, հանդիպումներ վարելու, թիրախային խմբերի հետ աշխատելու, բազմատեսակ տեղեկատվություն վերլուծելու, սինթեզելու ու անկողմնակալ եզրակացություն անելու հմտությունների հիման վրա:
- 1.4. ՈԱԱԿ-ը կազմակերպելու է փորձագետների և գործընթացը համակարգողների վերապատրաստումներ նշված հմտությունները զարգացնելու և կիրառելու համար: Փորձագետների հավաքագրման, ընտրության, վերապատրաստման և զարգացման քաղաքականությունը պետք է լինի հանրությանը հասանելի ՈԱԱԿ-ի կայքի միջոցով:
- 1.5. Որակի ապահովման գործընթացներում մասնակցող ՄՈՒՀ-երին ՈԱԱԿ-ը հավաստիացնելու է, որ`
 - գնահատում անցկացնող փորձագետների խմբի անդամները և գործընթացը համակարգողներն ունեն համապատասխան վերապատրաստում` գործընթացը մասնագիտորեն և վստահելի անցկացնելու համար,
 - Բոլոր ՄՈՒՀ-երում գնահատման յուրաքանչյուր մեթոդ պետք է կիրառվի համահավասար,
 - գնահատում անցկացնող խմբիբաժնեատու ա և գործընթացը համակարգողները իրենց ՄՈՒՀ-երին տալիս են միևնույն բովանդակային տեղեկատվություն:
- 1.6. Ինստիտուցիոնալ փորձաքննության և/կամ ծրագրային հավատարմագրման և/կամ ծրագրային ՄՈՒՀ-երի համար ՈԱԱԿ-ը կազմում է այց կատարող փորձագետների խումբ: Այդ խումբը ձևավորվում է մասնագետներից և շահակիցներից, որոնք հավաքագրվում և վերապատրաստվում են ՈԱԱԿ-ի կողմից (հիմք են ընդունվում նրանց մասնագիտական որակավորումները և շահագրգռվածությունը բարձրագույն կրթության որակի չափորոշիչների պահպանման և բարելավման նկատմամբ): Խմբում ներառվում է նաև ՈԱԱԿ-ի ներկայացուցիչ:
- 1.7. Փորձագետների գործունեությունը համակարգելու համար ՈԱԱԿ-ը կձևավորի Ծրագրային հավատարմագրման և Ինստիտուցիոնալ փորձաքննության ոլորտային հանձնաժողովներ , որոնք իրականացնելու են հետևյալ գործառնությունները.
 - առաջարկել փորձագետների թեկնածություններ` խորհրդակցելով ՈԱԱԿ-ի տնօրենի հետ,
 - ճշգրտել ընթացակարգային սկզբունքները և չափորոշիչները ինստիտուցիոնալ փորձաքննության ու ծրագրային հավատարմագրման առանձնահատուկ դեպքերի համար,

- ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ, որոնք պահանջվում են որակավորումների միջազգային ճանաչման համար,
- նշանակել փորձագիտական հանձնախմբեր ինստիտուցիոնալ փորձաքննության և ծրագրային հավատարմագրման համար,
- կազմել փորձագետների եզրակացությունների և ավարտական զեկույցի հիման վրա ամփոփիչ զեկույց,
- տրամադրել բարելավմանն ուղղված երաշխավորումներ հաստատություններին կամ կրթական ծրագրերին՝ փորձագիտական հանձնախմբերի զեկույցների հիման վրա,
- ներկայացնել զեկույց ՈԱԱԿ-ի կառավարման խորհրդին եզրակացությունների և եզրափակիչ որոշումների վերաբերյալ:

1.8. Ուսանողության ներկայացուցիչների թեկնածությունների առաջադրումը դուրս է ՈԱԱԿ-ի ոլորտային հանձնաժողովների պատասխանատվության շրջանակից. նրանց թեկնածությունները ներկայացնում են ՄՈՒՀ-երի ուսանողական կազմակերպությունները:

1.9. Մասնավորապես, ոլորտային հանձնաժողովները պետք է.

- 1.9.1. ձևավորեն փորձագիտական խմբեր, ընտրեն խմբերի նախագահներ ինստիտուցիոնալ փորձաքննության և ծրագրային հավատարմագրման գործընթացների կազմակերպման համար,
- 1.9.2. քննարկեն ինստիտուցիոնալ փորձաքննության /ծրագրային հավատարմագրման տեխնիկական ասպեկտները,
- 1.9.3. ուսումնասիրեն փորձագիտական խմբերի զեկույցները,
- 1.9.4. տրամադրեն մեկնաբանություններ զեկույցների վերաբերյալ ՈԱԱԿ-ի ղեկավարությանը,
- 1.9.5. իրականացնեն փորձագետների վերապատրաստում:

1.10. ՄՈՒՀ-երը հնարավորություն ունեն արտահայտելու իրենց կարծիքը խմբերի կազմի վերաբերյալ նախքան կազմի հաստատումը: Կա երկու հիմնական փորձագիտական խումբ՝ ինստիտուցիոնալ փորձաքննության և ծրագրային հավատարմագրման համար: Երկու խմբերի անդամներն էլ պետք է ունենան համապատասխան ներուժ և կարողություն հետևյալ ոլորտներից առնվազն մեկում՝

- ծրագրային և ինստիտուցիոնալ գնահատում,
- ծրագրերի մշակում և մշտադիտարկում,
- քաղաքականության և կարգերի մշակում,
- կրթական վարչարարություն,
- որակի ապահովում,
- գնահատվող մասնագիտության ոլորտում կամ հարակից այլ ոլորտում:

1.11. Փորձագիտական խմբերի կազմը կախված է փորձաքննության տեսակից՝ ինստիտուցիոնալ կամ ծրագրային: Այն կարող է ընդգրկել երկուսից-

հինգ փորձագետ, որոնց թեկնածությունները առաջարկվում են ոլորտային հանձնաժողովների կողմից ինստիտուցիոնալ փորձաքննություն և ծրագրային հավատարմագրում անցկացնելու դիմումը ստանալուց հետո:

1.12. Փորձագիտական խումբը սովորաբար բաղկացած է լինում.

- Պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներից, որոնք ունեն.
 - մասնագիտական փորձաքննության փորձառություն,
 - համապատասխան մասնագիտության ոլորտում գործունեության փորձառություն,
 - հավատարմագրման և գնահատման փորձ, միջազգային փորձ կրթական ոլորտում, կրթության կառավարման փորձ (ցանկալի է),
 - դասավանդման և/կամ գնահատման միջազգային փորձ,
 - մեթոդական փորձաքննության փորձառություն,
 - հավատարմագրման/փորձաքննության ոլորտում վերապատրաստումների մասնակցություն (ցանկալի է)
- Մասնագիտական ոլորտի/արդյունաբերության ներկայացուցիչներից, որոնք ունեն
 - մասնագիտական փորձաքննության փորձառություն,
 - ՄՈՒՀ-երի ուսումնառողներին և շրջանավարտներին աշխատանքի ընդունելու փորձ,
 - հավատարմագրման կամ գնահատման փորձառություն, միջազգային փորձ, ՄՈՒՀ-ի կառավարման փորձ (ցանկալի է),
 - հավատարմագրման/փորձաքննության ոլորտում վերապատրաստումների մասնակցություն (ցանկալի է),
 - հայտագրված կրթական ծրագրի հետ առնչություն (օր` նախկին դասախոս, ծրագիր կազմող, շրջանավարտ):
- Ուսումնառողներից, որոնք
 - սովորում են հայտագրված մասնագիտության կրթական ծրագրով,
 - հավատարմագրման/փորձաքննության ոլորտում վերապատրաստումների մասնակցություն (ցանկալի է):
- Կրթության ոլորտի վարչարարներից, որոնք ունեն.
 - մասնագիտական փորձաքննության փորձառություն,
 - հավատարմագրման կամ գնահատման աշխատանքների փորձառություն,
 - միջազգային փորձ,
 - կրթության կառավարման փորձ, հավատարմագրման/փորձաքննության ոլորտում վերապատրաստումների մասնակցություն (ցանկալի է):
- առնվազն մեկ արտերկրից հրավիրված փորձագետից (բացառությամբ միջին մասնագիտական կրթական ծրագրի):

Ծրագրային հավատարմագրման փորձագետներին ներկայացվող առանձնահատուկ պահանջներ.

- մագիստրոսական և բակալավրական կրթական ծրագրերի հավատարմագրման դեպքում փորձագետները պետք է ունենան առնվազն գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և/կամ դոցենտի կոչում,

- անդամներից առնվազն երկուսը պետք է ունենան գիտությունների դոկտորի աստիճան և/կամ պրոֆեսորի գիտական կոչում:

Ինստիտուցիոնալ փորձաքննության փորձագետներին և փորձագիտական խմբին ներկայացվող առանձնահատուկ պահանջներ.

- ԲՈՒՀ-երի փորձաքննության ղեպքում փորձագետները պետք է ունենան գիտական կոչում կամ աստիճան,
- Միջին և նախնական (արհեստագործական) ՄՈՒՀ-երի ղեպքում փորձագետները պետք է ունենան առնվազն մագիստրոսի աստիճան,
- Փորձագետներից առնվազն մեկը պետք է ունենա ինստիտուցիոնալ կառավարման փորձ,
- խումբում պետք է ընդգրկված լինի ուսանողության ներկայացուցիչ, որը մասնագիտական կրթության կառավարմանը մասնակցելու փորձ ունի,
- խմբում պետք է ընդգրկված լինի աշխատանքային բնագավառի կամ հանրային ծառայությունների մեկ ներկայացուցիչ:

Լեզվական հմտություններ. Փորձագետը պետք է վարժ տիրապետի հայերեն բանավոր և գրավոր խոսքին: Փորձագետներից առնվազն մեկը պետք է տիրապետի նաև անգլերենի լեզվին:

1.13. Ինստիտուցիոնալ փորձաքննություն /ծրագրային հավատարմագրում իրականացնող փորձագետների հմտություններին և գիտելիքներին ներկայացվող պահանջներ: Փորձագետը պետք է

- իմանա ՀՀ կրթական համակարգը,
- իմանա կրթության ոլորտի նորմատիվ-իրավական հիմքերը (օրենսդրությունը) և տերմինաբանությունը,
- իմանա կրթության ոլորտում ընթացող բարեփոխումները և արդի կրթական տեխնոլոգիաները,
- իմանա պետական կրթական չափորոշիչների պահանջները,
- իմանա ՄՈՒՀ-երի աշխատանքների կազմակերպումը (գործունեության հիմնական տեսակները, գործընթացները),
- իմանա ՈԱԱԿ-ի ուղենիշները, չափանիշներն ու չափորոշիչները և դրանց կիրառումը,
- իմանա ՈԱԱԿ-ի գնահատման մեթոդները և սանդղակները,
- կարողանա պատշաճ կերպով մեկնաբանել և կիրառել այդ չափանիշները գնահատման ռեալ իրադրություններում,
- ունենա բանավոր և գրավոր հաղորդակցման հմտություններ՝ հանդիպումներ վարելու, թիրախային խմբերի հետաշխատելու,
- կարողանա տարատեսակ տեղեկություններ վերլուծել և սինթեզել և ողջամիտ դատողություններ կատարել,
- իմանա Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներն ու ուղենիշները և դրանց կիրառումը:
- տեխնիկական փորձագետները պետք է հասկանան նաև փորձաքննության/հավատարմագրման ընթացքում կիրառվող

ստանդարտների հիմնարար հենքը (օր.՝ ISO/IEC 17025, ISO 15189 կամ ISO/IEC 17020):

1.14. Փորձագետների անձնային հատկություններին ներկայացվող պահանջներ:
Փորձագետը պետք է լինի՝

- օրինավոր՝ ազնիվ, արդարամիտ, անկեղծ, զսպված, անաչառ և խոհեմ,
- Բաց՝ այլընտրանքային գաղափարներ և տեսակետներ ընկալելու հմտություն,
- Ճկուն՝ հաղորդակցման և թիմային աշխատանքի հմտություններ
- ուշադիր, դիտունակ՝ փաստերի և շրջակա իրողության հետ ակտիվորեն ծանոթանալու հմտություն,
- խորաթափանց՝ իրավիճակում արագ կադմնորոշվելու կարողություն,
- Բազմակողմանի՝ պատրաստ լինի ցանկացած իրավիճակների,
- հաստատակամ՝ նպատակաուղղված,
- վճռական՝ ժամանակին կայացնել որոշումներ՝ հիմնվելով տրամաբանական դատողությունների և փաստերի ու տվյալների վերլուծության վրա,
- ինքնուրույն՝ գործել և կատարել իր գործառույթները ինքնուրույն, միևնույն ժամանակ արդյունավետ համագործակցել ուրիշների հետ:
Փորձագետը պետք է կարողանա կիրառել վերոհիշյալ հատկանիշները, որպեսզի՝
- վեր հանի և արդարացի գնահատի փաստերը,
- հավատարիմ մնա գնահատման սկզբունքներին և չվախենա անկողմնակալ որոշումներ կայացնելուց,
- մշտապես արժեքավորի կատարված դիտարկումները և հաղորդակցությունը գնահատման ընթացքում,
- ցուցաբերի պատշաճ վերաբերմունք ողջ աշխատակազմի հանդեպ՝ նպաստելով գնահատման նպատակի իրականացմանը,
- հաշվի առնի ազգային առանձնահատկությունները, ինչպես նաև հաստատության ավանդույթները,
- կատարի գնահատումը առանց շեղումների և անճշտությունների,
- ամբողջ ուշադրությունը կենտրոնացնի գնահատման գործընթացի վրա և աջակցի դրա իրականացմանը,
- արդյունավետ արձագանքի կոնֆլիկտային իրավիճակներին,
- կատարի արդարացի եզրակացություն՝ հիմնվելով գնահատման ընթացքում հավաքված փաստերի վրա,
- լինի վճռական. չենթարկվի չհիմնավորված փոփոխություններ կատարելու պահանջներին:

1.15. Մինչև փորձագիտական խմբի հաստատումը դիմող ՄՈՒՀ-ը տեղեկացվում է խմբի կազմի մասին: ՄՈՒՀ-ը կարող է ՈԱԱԿ բացարկ ներկայացնել որևէ փորձագետի վերաբերյալ, եթե կանխակալ վերաբերմունքի կասկած է առաջանում: Թեկնածուի բացարկը կարող է հիմնավորվել.

- գնահատման ենթակա կառույցի տեսանկյունից փորձագետի ոչ համարժեք մասնագիտական որակավորումներով,
- գնահատման ոլորտում փորձագետի ոչ համարժեք փորձառությամբ,

- շահերի բախման առկայությամբ:

1.16. ՈԱԱԿ-ի յուրաքանչյուր փորձագետ մինչև որակի ապահովման գործընթացի սկիզբը պետք է ստորագրի **գաղտնիությունը և անկողմնակալությունը ապահովող պարտավորագիր** : Փորձագիտական խումբն իր աշխատանքի ընթացքում պետք է ղեկավարվի ՈԱԱԿ-ի սահմանած չափանիշներով և ընթացակարգերով:

1.17. Փորձագիտական խումբը պատասխանատու է.

- նախքան ՄՈՒՀ այցելությունը ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման համար,
- այց իրականացման համար,
- ինքնավերլուծության, ներկայացված անհրաժեշտ փաստաթղթերի ուսումնասիրության և այցի արդյունքների հիման վրա եզրափակիչ զեկույցի պատրաստման համար,
- ոլորտային հանձնաժողովներին եզրափակիչ գնահատման արդյունքները և երաշխավորվող որոշումները տրամադրելու համար,
- թերությունների վերացումը հավաստող փաստաթղթերի ուսումնասիրության (ինստիտուցիոնալ փորձաքննության պայմանական կարգավիճակի դեպքում) և ոլորտային հանձնաժողովներին եզրափակիչ գնահատման արդյունքներն ու երաշխավորվող որոշումները տրամադրելու համար:

Փորձագիտական խմբերի ձևավորում կրկնակի գնահատման դեպքում

Բացասական արդյունքի դեպքում ՄՈՒՀ-ը կարող է դիմել ՈԱԱԿ կրկնակի գնահատման համար: Այս դեպքում, սուբյեկտիվությունից խուսափելու նպատակով, ստեղծվում է փորձագետների նոր խումբ : Փորձագետների թիվը կարող է լինել նախկին գնահատումն անցկացրած փորձագետների թվից պակաս կամ դրան հավասար: ՄՈՒՀ-ի պահանջով, խումբը կարող է լրացվել նոր անդամներով:

~

2. Փորձագետների ընտրություն

2.1 Առավել բանիմաց և հուսալի փորձագետներ հավաքագրելու համար ՈԱԱԿ-ը ստեղծել է հավաքագրման տվյալների բազա, որը հասանելի է ՈԱԱԿ-ի կայքէջում (www.anqa.am): Թեկնածուները կարող են լրացնել պահանջվող տվյալները և վերաբեռնել իրենց ինքնակենսագրությունը: Հիմնվելով ՈԱԱԿ-ի փորձագիտական բազայի վրա՝ Ոլորտային հանձնաժողովները յուրաքանչյուր փորձաքննության համար կընտրեն հավանական թեկնածուներ և կկատարեն հավաքագրում:

2.2 Փորձագետի թեկնածուների բանիմացությունը չափվում է դիմողի ցուցադրած փորձագիտական առանձնահատուկ գիտելիքների կիրառմամբ, հմտություններով և անձնային հատկանիշներով: ՈԱԱԿ-ը կարող է կիրառել փորձագետի բանիմացությունը որոշելու տարբեր մեթոդներ.

- **Թեստավորում/վերապատրաստման գնահատում.** էսսեներ կամ հարցազրույցներ՝ որոշելու, թե որքանով են փորձագետի գիտելիքներն ու ունակությունները համապատասխանում ՈԱԱԿ-ի պահանջներին:
- **Ցուցադրում.** պաշտոնական վկայություններ փորձագիտական առանձնահատուկ հմտություններ ունենալու մասին:
- **Պաշտոնական գնահատում.** փորձագիտական հմտությունների պաշտոնական վկայություններ և գնահատում՝ բուն փորձաքննության ընթացքում:
- **Պատահական դիտարկումներ.** ոչ պաշտոնական դիտարկումներ, որոնք կարող են տեղի ունենալ բուն գործընթացներում կամ այլ իրավիճակներում, որոնց ժամանակ կարող են դրսևորվել փորձագիտական կարողությունները: Այս մեթոդները կարող են համակցվել:
- **Փաստաթղթեր.** արձանագրված տեղեկատվություն (կենսագրություն, գնահատման նյութեր, վերապատրաստման հավաստագրեր, սերտիֆիկատներ և մասնագիտական արտոնագրեր):
- **Վերստուգում.** անկախ վերստուգում կամ լրացուցիչ օբյեկտիվ փաստեր, որոնք ստացվել են գնահատման կարողությունների մեթոդների վերաբերյալ, ինչպես, օրինակ, ատեստացիա կամ փաստաթղթերի ներկայացում:
- **Նախորդ աշխատանքների վերանայում.** փորձագիտական զեկույցների, լրացրած ձևաթղթերի, գնահատման պլանների կամ այլ գրավոր նյութերի վերանայում:
- **Հարցազրույց.** Հարցազրույցն անցկացնում են մեկ, երկու վարող կամ ՈԱԱԿ-ի ոլորտային հանձնաժողովները: Հարցազրույցների մեթոդը թույլ է տալիս վերստուգել նաև այլ աղբյուրներից ստացված տեղեկությունները:

2.3 Փորձագետների գնահատման համակարգ. ՈԱԱԿ-ը կսահմանի փորձագետներին ներկայացվող պահանջների (կրթություն, փորձ, վերապատրաստումներ, անձնային հատկություններ, լեզվի իմացություն) նվազագույն շեմերը: Փորձագետների խմբի ձևավորման համար սահմանվում է գնահատման մեթոդ: Փորձագետների ձևավորված խմբի անդամների համակցությունը պետք է բավարարի ներկայացվող բոլոր պահանջներին:

2.4 ՄՈԻՀ-երի հետ փորձագիտական խմբի կազմը համաձայնեցնելուց հետո ընտրված և խմբում ընդգրկված փորձագետները պետք է մասնակցեն ՈԱԱԿ-ի կողմից անցկացվող վերապատրաստումներին:

2.5 Նախնական վերապատրաստում. փորձառություն չունեցող մասնագետների համար ՈԱԱԿ-ը կազմակերպում է նախնական վերապատրաստում՝ երաշխավորելու, որ նրանք իրավասու են մասնակցել իրենց առաջին փորձաքննությանը: Փորձաքննության ընթացքում փորձագետների կատարած աշխատանքի բացասական գնահատման դեպքում, նրանք պետք է անցնեն լրացուցիչ վերապատրաստման դասընթացներ կամ այլևս չներգրավվեն փորձաքննության մեջ: Փորձագիտական խմբի յուրաքանչյուր անդամ և գործընթացը համակարգող կարող է ակնկալել ՈԱԱԿ-ից.

- ծանոթացում ՈԱԱԿ-ի աշխատանքին, առաքելությանը, չափանիշներին, չափորոշիչներին և արժեքներին,

- վերապատրաստում անհրաժեշտ հմտություններ ձեռք բերելու համար, որպեսզի անցկացնեն արդյունավետ որակի ապահովման գործընթացներ,
- օժանդակություն առաջին փորձաքննությունը բավարար վստահությամբ անցկացնելու համար (օր.՝ դիտորդի կարգավիճակով փորձաքննությունների մասնակցություն),
- վերապատրաստման նյութեր դասընթացն ավարտելուց հետո օգտագործելու համար,
- անհրաժեշտ փաստաթղթեր դիտարկումներ կատարելու համար,
- ընդգրկում ՈԱԱԿ-ի նամակացուցակում՝ անհրաժեշտ նոր հրապարակումներ և ՈԱԱԿ-ի աշխատանքների մասին տեղեկատվություն ստանալու համար,
- գնահատման մեթոդների վերանայման գործընթացում ներդրում ունենալու հնարավորություն:

Նախնական վերապատրաստման դրական ավարտի դեպքում ՈԱԱԿ-ը պետք է.

- փորձագիտական խմբի անդամներին տրամադրի կատարած աշխատանքի գնահատականը և, անհրաժեշտության դեպքում, տա համապատասխան ցուցումներ,
- խրախուսի խմբի անդամների հետագա զարգացումը, հաշվի առնի ՈԱԱԿ-ի նախորդ վերապատրաստումների ընթացքում ձեռք բերված փորձը նոր փորձագետների խմբի անդամների և գործընթացը համակարգողների վերապատրաստման ընթացքում:

ՈԱԱԿ-ը նախատեսում է փորձագետների զարգացում մի քանի մակարդակով՝ սկսնակ փորձագետից մինչև որակավորված փորձագետ:

Սկսնակ փորձագետը որակի արտաքին գնահատման գործողություններում կարող է մասնակցել որակավորված փորձագետի աշխատանքին որպես դիտորդ ընդգրկվելուց (առաջին մեկ կամ երկու գնահատումների ընթացքում) մինչև որակավորված փորձագետի ղեկավարությամբ մասնակկամ ամբողջական փորձաքննության անցկացնելը:

2.6 Ընթացիկ վերապատրաստում. Նոր պահանջների մասին տեղեկատվության հաղորդման և փորձի փոխանակման նպատակով ՈԱԱԿ-ը իր որակավորված փորձագետների համար պարբերաբար կազմակերպելու է վերապատրաստման և կարճաժամկետ դասընթացներ: Իր գործառույթների շրջանակում, ՈԱԱԿ-ը փորձագետների կամ, անհրաժեշտության դեպքում, տեխնիկական փորձագետների համար կազմակերպելու է հատուկ հանդիպումներ խնդրահարույց ոլորտները քննարկելու նպատակով: Դա ապահովելու է արտաքին գնահատման հետևողականությունը և որակի ապահովման գործընթացների ընդհանուր բարելավումը: Այդ միջոցառումներն իրականացվելու են պարբերաբար: ՈԱԱԿ-ը պահանջում է իր փորձագետների մասնակցությունը առնվազն մի քանի տարբեր վերապատրաստումներին:

2.7 Մասնագիտական զարգացում. ՈԱԱԿ-ը նաև խրախուսում է իր փորձագետներին և պահանջում՝ տարբեր միջոցներով մշտապես զարգացնել իրենց մասնագիտական կարողությունները.

- **Շարունակական կրթություն.** փորձագետները պետք է շարունակաբար թարմացնեն իրենց գիտելիքները և հմտությունները՝ մասնակցելով անհրաժեշտ կուրսերին, սեմինարներին, աշխատաժողովներին և վերապատրաստման դասընթացներին:
- **Զարգացման միջոցառումներ.** գիտելիքները և հմտությունները զարգացնելուն ի հավելում՝ օգտակար է նաև մասնագիտական ընկերակցություններին անդամակցելը, մասնակցությունը կոնֆերանսներին և չափորոշիչներ մշակող հանձնախմբերի աշխատանքներին:
- **Դասավանդում.** որպես դասավանդող մասնակցել որևէ պաշտոնական դասընթացի, որն առնչվում է գնահատման խնդիրներին:
- **Մենտորություն.** Դիտարկել և գնահատել մյուսների կատարած գնահատումները:

3.Փորձագետների կատարած աշխատանքների գնահատում

3.1 Փորձագետների գնահատման պատշաճ կատարումը էական նշանակություն ունի: ՈԱԱԿ-ը սահմանել է համապատասխան ընթացակարգեր փորձագետի կատարողական հմտության թե՛ նախնական գնահատման և թե՛ ընթացիկ գնահատման համար:

3.2 Նախնական գնահատում. ՈԱԱԿ-ը դիտարկելու և տեղում գնահատելու է նոր փորձագետների նախնական գնահատումները փորձառու անձնակազմի միջոցով:

3.3 Կիրառվելիք չափանիշները համապատասխանելու են ՈԱԱԿ-ի՝ գնահատումների պատշաճ կատարման առանձնահատուկ քաղաքականությանն ու ընթացակարգերին: ՈԱԱԿ-ը ենթադրում է օգտագործել նաև ՄՈԻՀ-երի արձագանքները իրենց կատարած գնահատումների վերաբերյալ, ինչպես նաև փորձագետի կատարած աշխատանքի մասին գնահատող մասնագետի կարծիքը:

3.4 Ընթացիկ գնահատում. ՈԱԱԿ-ը դիտարկելու է նաև փորձագետների ընթացիկ կատարողականությունը՝ օգտագործելով հետևյալ մեթոդների համակցությունը.

- **Պաշտոնական դիտարկում.** ՈԱԱԿ-ի անձնակազմը տեղում վարելու է փորձաքննություն և զեկուցելու է փորձագետների կատարողականի վերաբերյալ՝ առաջարկություններ ներկայացնելով այն բարելավելու ուղղությամբ: Բոլոր փորձագետները պարբերաբար գնահատվելու են առնվազն երեք տարին մեկ անգամ կամ ավելի հաճախ:
- **Փորձագետների զեկույցների դիտարկում.** ՈԱԱԿ-ի անձնակազմը ստուգելու է հայտնաբերված տվյալների վերաբերյալ փորձագետների զեկույցները և ավարտուն փաստաթղթերը՝ երաշխավորելու պահանջների համապատասխան մեկնաբանումը, փաստերի համապատասխան արձանագրումը և շարադրանքի հստակությունը: Այդ ստուգումները

կատարվելու են պարբերաբար և արձանագրվելու են՝ փորձագետին պատշաճ կերպով ներկայացնելու համար:

- **ՄՈՒՀ-երի արձագանքների ամփոփումը.** ՄՈՒՀ-երից բանավոր կամ գրավոր կարծիքների հարցումը փորձագետների կատարողականի գնահատման լրացուցիչ գործիքներից է: Դա արվելու է պարբերաբար և արձանագրվելու է՝ փորձագետին պատշաճ կերպով ներկայացնելու համար:
- **Խմբի անդամների կարծիքների հավաքագրումը.** թիմակից փորձագետների բանավոր կամ գրավոր կարծիքները նույնպես օգտագործվելու են որպես արդյունավետ գործիք՝ ամբողջականացնելու համար գնահատման գործընթացը:
- **Պատահական դիտարկումներ.** պատահական կամ ոչ պաշտոնական դիտարկումներ նույնպես կիրառվելու են: Այդ դիտարկումները կարող են կատարվել կամ ընթացիկ գնահատման ժամանակ, կամ այլ իրավիճակներում, ինչպես խմբի հանդիպումները կամ վերապատրաստումը, որոնց ընթացքում կարող են դիտարկվել գնահատման հմտությունները կամ անհատական հատկանիշները:

4. Շահերի բախում, գաղտնիություն և ազնվություն

4.1 Շահերի բախում. պոտենցիալ փորձագետները նշանակվելուց առաջ պետք է ներկայացնեն մասնագիտական, ֆինանսական և աշխատանքային շահերը, որոնք կարող են ընկալվել որպես շահերի բախում: ՈԱԱԿ-ը փորձաքննությանը մասնակցող փորձագետների համար որդեգրել է շահերի բախումը բացառող խիստ քաղաքականություն:

Փորձագետի թեկնածուն համարվում է շահերի հավանական բախում ունեցող, եթե ունի.

- պաշտոնական կապեր կամ գործառույթներ փորձաքննության ենթարկվող հաստատության հետ,
- ազգակցական կապ,
- առկա է հավանական ֆինանսական կամ այլ շահ, որը կարող է անկախ և անաչառ դատողություններ անելու հնարավորության կասկած առաջացնել: Այդպիսիք կարող են լինել.
 - ֆինանսական կամ այլ շահեր փորձաքննության ենթակա հաստատության հետ, որոնք առաջացել են դրանց հետ համատեղ աշխատանքային կամ խորհրդատվական միջոցառումների հետևանքով,
 - աշխատանքային կամ խորհրդատվական գործունեության ակնկալում փորձաքննության ենթակա հաստատության հետ առանց հավատարմագրման հանձնախմբի նախագահին նախապես տեղեկացնելու,
 - փորձաքննության ենթակա հաստատության ամբողջական կամ մասնակի սեփականատեր հանդիսանալը կամ սեփականատեր հանդիսացող ընկերության բաժնետեր լինելը,
 - փորձաքննության ենթակա հաստատությունում որպես պաշտոնյա կամ

ղեկավար անձ աշխատելը:

Եթե թեկնածուն վստահ չէ՝ արդյո՞ք այս կամ այն շահը ենթակա է հայտարարագրման, նա պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել Կոմիտեի նախագահին, որը որոշում է՝ արդյո՞ք շահերի բախում կա, թե՞ ոչ:

4.2 Գաղտնիությունը. փորձագետները պետք է ստորագրեն գաղտնիության մասին պարտավորագիր, որը երաշխավորում է, որ գնահատվող հաստատության և հաստատության մասին ստացված ողջ տեղեկատվությունը պահպանվելու է և ոչ մի տեղեկատվություն չի բացահայտվելու առանց ՄՈՒՀ-ի գրավոր թույլտվության:

4.3 Ազնվությունը. ՈԱԱԿ-ը հետևելու է, որ փորձագետները չենթարկվեն որևէ ճնշման կամ ազդեցության, ինչը կարող է ազդել նրանց ազնվության վրա:

4.4 Անաչառությունը. փորձագետները պետք է գերծ մնան կոմերցիոն, ֆինանսական կամ այլ ճնշումներից, որոնք կարող են ազդել նրանց անաչառության վրա:

4.5 Խորհրդատվությունները. ՈԱԱԿ-ը իր փորձագետներին չի թույլատրում խորհրդատվություն տրամադրել իր իսկ կողմից գնահատվող ՄՈՒՀ-երին փորձաքննության կամ հավատարմագրման ակտիվ գործընթացի ժամանակ:

Հավելված 1: Տիպաբանություն. Ինստիտուցիոնալ փորձաքննություն/ծրագրային հավատարմագրում

	Կրթական հավատարմագրում	Ծրագրի	Ինստիտուցիոնալ փորձաքննություն
Սահմանումը (ECA/UNESCO/EU council)	Որակի նախանշված չափորոշիչներին կրթական ծրագրի որակի համապատասխանության անկախ գնահատում		Հաստատության որակը երաշխավորող ընթացակարգերի և մեխանիզմների վերլուծություն
Նպատակը	Կրթական ծրագրի ճանաչում Որակի բարելավում Հաշվետվողականություն		Որակի բարելավում Հաշվետվողականություն
Ում կողմից գնահատվում է	Կառավարության կողմից լիազորված ՈԱԱԿ հիմնադրամը /փորձագետների միջոցով/		Կառավարության կողմից լիազորված ՈԱԱԿ հիմնադրամը /փորձագետների միջոցով/
Որակի հասկացություն /Մոտեցումը/	Համապատասխանություն նպատակին - Որակի սահմանված չափորոշիչներ /ՈԱԱԿ/ - Որակի նվազագույն շեմ /մասնագիտության պետական կրթական ծրագրի չափորոշիչ/		Համապատասխանություն նպատակին - Հաստատության սահմանած առաքելության և նպատակների իրականացման գործընթացների արդյունավետություն
Ընթացակարգը	1. Ինքնավերլուծության զեկույց 2. Անկախ փորձագետների այց → փորձագետների զեկույց 3. Որոշման կայացում		1. Ինքնավերլուծության զեկույց 2. Անկախ փորձագետների այց → փորձագետների զեկույց 3. Բարելավման նպատակով տրամադրվող խորհրդատվություն
Շրջանակը	Գնահատումը ստանալու մասնագիտությունների կրթական ծրագրերի		Հաստատության քաղաքականության, ռազմավարության իրականացման ընթացքի և արդյունքների գնահատում
Ուսումնասիրվող ոլորտներ	Ներդրում, գործընթաց, արդյունք - Որակի ապահովման ներքին մեխանիզմներ - Պորտֆոլիո - Դասավանդման մեթոդներ - Գնահատման համակարգ - Հետազոտական գործունեություն		Կազմակերպչական գործընթացներ - Ինստիտուցիոնալ փորձաքննություն՝ կախված նպատակներից - Կախված ենթատեսակներից

	- Ռեսուրսներ	
Արդյունքներ որոշումներ	Այո/Ոչ/Պայմանական այո /	Ուժեղ և թույլ կողմեր, կազմակերպչական գործընթացների բարելավման նպատակով տրամադրվող խորհրդատվություն
Թիրախ	Հասարակություն Պետություն Ֆինանսավորող կազմակերպություններ	Մասնագիտական ուսումնական հաստատություններ Հասարակություն Պետություն

Հավելված 2: Մասնագիտության ծրագրի կառուցվածք

Նոր կրթական ծրագրեր, առարկաներ և մոդուլներ մշակելու և հաստատելու ընթացակարգերը պետք է ներառեն հստակ և համապարփակ գործընթաց, որը վկայում է, որ քննարկվել և նկարագրվել է հետևյալը.

- ծրագրի հայեցակարգը և նպատակները,
- ծրագրի համարժեքությունը հաստատության առաքելությանը և ռազմավարական պլանին,
- ծրագրի խնդիրները, առարկան և մոդուլները,
- ծրագրի, ինչպես նաև յուրաքանչյուր դասընթացի և մոդուլի ակնկալվող կրթական արդյունքները,
- ծրագրի համապատասխանությունը նշված նպատակներին և ակնկալվող կրթական արդյունքներին,
- կատարման եղանակը և ECTS կրեդիտներով արտահայտված բեռնվածությունը,
- կրթական արդյունքներին համարժեք դասավանդման և ուսումնառության մեթոդները,
- կապակցումը հաստատության այլ ծրագրերին,
- ապագա զբաղվածության (աշխատանքի տեղավորման հնարավորության) խնդիրների հետ կապակցումը ,
- ծրագրի կառավարման խնդիրները,
- ծրագրի համարժեքությունը Հայաստանի, եվրոպական և համաշխարհային աշխատաշուկաների պահանջներին,
- մարդկային անհրաժեշտ ռեսուրսների ներգրավումը,
- անհրաժեշտ ինֆորմացիոն ռեսուրսները,
- ծրագրի ազդեցությունը ՄՈՒՀ-ի նյութատեխնիկական ենթակառուցվածքների զարգացման վրա,
- անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ներգրավումը,
- այլ ՄՈՒՀ-երի կողմից առաջարկվող համանման կամ հարակից ծրագրերի միջավայրային վերլուծությունը,
- ծրագրի պահանջարկվածությունը սովորողների կողմից, ծրագրի վերաբերյալ համապատասխան շահակիցների և մասնագիտական շրջանակի հետ խորհրդակցությունների անցկացումը, սովորողների արդարացի, հիմնավորված և չափորոշիչներին համապատասխանող գնահատման ներդրված մեխանիզմները,
- ՄՈՒՀ-ի գործունեության դադարեցման դեպքում սովորողների շահերի պաշտպանության մեխանիզմները,
- սովորողների ընդունելության, փոխադրումների և առաջադիմության բավարար մեխանիզմներ որակավորումների ազգային շրջանակին համապատասխան դիմապլոմի հավելված և այդօրինակ այլ:

Հավելված 3: Մասնագիտության կրթական ծրագրի պարբերաբար վերանայում

Ծրագրային պարբերաբար գնահատումը կարող է կատարվել առանձին մեկ ծրագրի կամ հարակից ծրագրերի խմբի շրջանակներում: Օրինակ՝ կարող է լինել համակցված գնահատում ՄՈՒՀ-ի որևէ ֆակուլտետում: Նման գնահատումը պետք է ձեռնարկվի երկու փուլով՝ ներքին և արտաքին:

1. Ներքին փուլը պետք է սկսվի հարցաշարային ինքնագնահատմամբ:
2. Ներքին փուլը պետք է պարունակի ծրագրում ընդգրկված ողջ ակադեմիական կազմի, ուսումնառողների և ծրագրի շրջանավարտների ներկայացուցիչների և այլ շահակիցների կողմից կատարված ինքնավերլուծություն: Այն պետք է նաև ընդգրկի անձանց, որոնք մատուցում են ուսումնասօժանդակ ծառայություններ (գրադարան, ուսումնական գրասենյակ և այլն):
3. ՄՈՒՀ-ի՝ ծրագրում չընդգրկված անձնակազմը նույնպես կարող է մասնակցել ինքնավերլուծությանը: Արտաքին շահակիցների հետ խորհրդակցությունները, շուկայի անհրաժեշտ ուսումնասիրությունն ու մասնագիտական ոլորտի վերջին նվաճումների տվյալները նույնպես պետք է ինքնավերլուծության մաս կազմեն: Ինքնավերլուծությունը պետք է ներառի դասավանդման և ուսումնառության գնահատականը, ինչպես նաև ծրագրին առնչվող ծառայությունների գնահատումը: ՈԱԱԿ-ը պետք է սահմանված կարգով ապահովի հետագա երաշխավորումների տրամադրումը և վերապատրաստումներ առաջարկի ինքնավերլուծության ոլորտում:
4. Ինքնավերլուծության արդյունքները ամփոփվում են ինքնավերլուծական զեկույցում, որը ներկայացնում է ինքնավերլուծության արդյունքների տվյալները՝ ներառյալ ծրագրի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու վտանգները, ինչպես նաև կողմնորոշող ընթացակարգերն ու եզրահանգումները: ՄՈՒՀ-ը պետք է ներկայացնի ՈԱԱԿ-ին ներքին ինքնավերլուծության զեկույցի վեց օրինակ, ինչպես նաև էլեկտրոնային տարբերակը:
5. Հետևելով ինքնավերլուծությանը՝ ՄՈՒՀ-ը պետք է ձեռնարկի արտաքին գնահատում փորձագետների կողմից, ներառյալ շահակիցներին և ծրագրերի ազգային և միջազգային համադրական վերլուծություն կատարելու ասպարեզում իրավասու անձանց: Արտաքին գնահատումը պետք է վարվի միջազգային լավագույն փորձին համապատասխան;
6. Արտաքին փորձագիտական խումբը պետք է վերանայի ինքնավերլուծության զեկույցը և կատարի ծրագրի իր սեփական գնահատումը: Արտաքին գնահատումը պետք է լինի համագործակցային գործընթաց՝ հիմնված տեղական և միջազգային մասնագետների հետ խորհրդակցելու վրա: Մասնագետ-գործընկերներից բացի՝ արտաքին փորձագետներ կարող են ներգրավվել սոցիալական գործընկերներից, մասնագիտական ընկերակցություններից, ուսումնառողներից և ՄՈՒՀ-ի շրջանավարտներից: Արտաքին փորձագետների դերակատարությունը և պատասխանատվությունները, ինչպես նաև նրանց ընտրության չափանիշներն ու արձանագրությունները պետք է հստակ փաստաթղթավորված լինեն:

7. Արտաքին վերլուծությունը ամփոփվում է արտաքին վերլուծության զեկույցում, որը ներկայացնում է փորձագիտական խմբի հայտնաբերած տվյալները: ՄՈՒՀ-ը պետք է ունենա հնարավորություն մեկնաբանություններ կատարելու արտաքին վերլուծության զեկույցի եզրափակիչ տեքստի վերաբերյալ: ՄՈՒՀ-ը պետք է զեկույցի մի օրինակը ներկայացնի ՈԱԱԿ-ի քննարկմանը, որը կարող է բարելավմանն ուղղված երաշխավորումներ տրամադրել ՄՈՒՀ-ին՝ ելնելով զեկույցից և նախորդ գնահատման տվյալներից: ՄՈՒՀ-ը պետք է հետևողական լինի այդ երաշխավորումների նկատմամբ:
8. ՄՈՒՀ-ը պետք է ունենա պաշտոնական կանոնակարգ ինքնավերլուծության և արտաքին վերլուծության տվյալները քննարկելու և արդյունքներն օգտագործելու համար: ՈԱԱԿ-ը և ՄՈՒՀ-ը պետք է համաձայնության գան հայտնաբերված տվյալների իրագործման ժամկետների շուրջը:
9. ՄՈՒՀ-ը պետք է ունենա իրականացվող բոլոր ծրագրերի գնահատման մանրամասն ժամանակացույց:

Հավելված 4: ՈԱԵՉՈՒ-ի ինտեգրում

1. Նոր կրթական ծրագրեր, առարկաներ և մոդուլներ մշակելու և հաստատելու ընթացակարգեր

Նոր կրթական ծրագրեր, առարկաներ և մոդուլներ մշակելու ու հաստատելու ընթացակարգերը պետք է ներառեն հստակ գործողություններ, որոնք կհավաստեն խնդիրների բարեհաջող լուծումը՝ փաստերի վերլուծության համակարգված մոտեցմամբ: (տես ծրագրի կառուցվածքը հավելված 2-ում)

ՄՈՒՀ-ի կողմից ՈԱԱԿ-ին ներկայացված հավատարմագրման ենթակա կրթական մասնագիտության ծրագրերը պետք է համապատասխանեն այդ ծրագրերի մշակման ու հաստատման գործընթացի բոլոր պահանջներին և պետք է լինեն համատեղելի որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) հետ:

2. Ուսումնառողների գնահատման ընթացակարգերը

ՄՈՒՀ-երը պետք է հաստատեն ուսումնառողների գնահատման կարգը, որը պետք է լինի արդար և հետևողական, համապատասխանի ՈԱԱԿ-ի կողմից սահմանված չափորոշիչներին և ՈԱՇ-ի համատեքստին: ՄՈՒՀ-ը, որպես որակի ապահովման ընթացակարգերի մաս, ուսումնառողի գնահատման ընթացակարգերի արդյունավետությունը գնահատելու համար պետք է ունենա պարբերաբար անցկացվող միջոցառումներ, որոնք կերաշխավորեն գործնականում արդար, հետևողական և ՈԱԱԿ-ի չափանիշներին համապատասխան գործընթաց: Այդ նպատակով պետք է պատրաստվի պարբերաբար թարմացվող և հրապարակայնորեն հասանելի համապատասխան ձեռնարկ ուսումնառողների գնահատման քաղաքականության և ընթացակարգերի մասին:

3. Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման կարգը

Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկումը կարևոր է, քանի որ այն երաշխավորում է որակի և պահանջվող չափորոշիչների պահպանումը: ՄՈՒՀ-ը պետք է ունենա համապատասխան ընթացակարգեր և մշտադիտարկի ծրագրերի հաջող ընթացքը, որպեսզի.

- երաշխավորի կրթական ծրագրի մասնագիտական ոլորտում մնալու ակտուալությունը,
- գնահատի ուսումնառողների կողմից ակնկալվող կրթական արդյունքներին հասնելու աստիճանը,
- գնահատի դասընթացների և գնահատման մեթոդների համապատասխանությունը կրթական արդյունքներին:

Այդ նպատակով անհրաժեշտ է ստեղծել համապատասխան հանձնաժողովներ՝ հստակ տարանջատելով դրանց պատասխանատվությունները: Հանձնաժողովները պետք է երաշխավորեն, որ յուրաքանչյուր կրթական ծրագիր սահմանված կարգով

մշտադիտարկվում է, հայտնաբերվում են ակնկալվող կրթական արդյունքներից շեղումները, կատարվում են համապատասխան շտկումներ և պարբերաբար գնահատվում է կատարված շտկումների արդյունավետությունը:

4. Յուրաքանչյուր ծրագրի շրջափուլային գնահատման ընթացակարգերը

Ծրագրերի պարբերաբար պաշտոնական գնահատումը երաշխավորում է

- ծրագրերի որակի բարելավումը,
- ծրագրերի՝ սովորողների կարիքներին, ակադեմիական և աշխատաշուկայի պահանջներին համարժեքությունը:

Այդ նպատակով ՄՈՒՀ-ը պետք է ունենա ընթացակարգ, որը կապահովի յուրաքանչյուր ծրագրի պարբերաբար գնահատում (մանրամասների համար տես հավելված 3):

5. Անձնակազմի ընտրության, նշանակման, գնահատման և զարգացման ընթացակարգերը

ՄՈՒՀ-ը պետք է պարբերաբար վերանայի մարդկային ռեսուրսների քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը: Մասնավորապես, քաղաքականությունը և ընթացակարգերը կարող են վերաբերել ծրագրում ընդգրկված անձնակազմի ընտրությանը, նշանակմանը, գնահատմանը և զարգացմանը: Անձնակազմի զարգացման ծրագիրը և դրա համար բաշխվող ռեսուրսները պետք է առաջնահերթություն լինեն:

6. Առկա տարածքային պայմանների, սարքավորումների և օժանդակ ծառայությունների գնահատման ընթացակարգերը

ՄՈՒՀ-ը պետք է պարբերաբար վերանայի իր առկա տարածքային պայմանները, սարքավորումների վիճակը և օժանդակ ծառայությունները, ինչը կերաշխավորի դրանց համարժեքությունը իրականացվող ծրագրերին և արդյունավետությունը:

7. Կրթական ծրագիրը սպասարկող ծառայությունների գնահատումը

ՄՈՒՀ-ը պետք է պարբերաբար վերանայի իր հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերը սպասարկող ծառայությունների արդյունավետությունը: Այդ օժանդակ ծառայությունները պետք է ներառեն առնվազն հետևյալը.

- գրադարանային, տեղեկատվական և համակարգչային ծառայություններ,
- ուսումնառողներին աջակցելու ծառայություններ (թե՛ ուսումնական, թե՛ արտաուսումնական),
- վարչական ծառայություններ,
- տեխնիկական ծառայություններ,
- սպասարկման և պահպանման ծառայություններ,
- ծառայություններ, որոնք հասանելի կդարձնեն ՄՈՒՀ-ի առաքելությունը և գործողությունները ներկա և ապագա ուսումնառողներին, այլ ՄՈՒՀ-երին, գործատուներին, մասնագիտական միություններին և հասարակությանը:

Այդպիսի վերանայումը պետք է կենտրոնանա այն հարցի շուրջը, թե որքանով է այդ ծառայություններից յուրաքանչյուրը նպաստում հաջող ուսումնառությանը: Մասնավորապես, պետք է ուսումնասիրվեն

- ծառայությունների և նյութատեխնիկական միջոցների արդյունավետությունը և այն չափելու մեթոդները,
- դրանք առավել արդյունավետ դարձնելուն ուղղված քայլերը:

8. Որակի ապահովման ընթացակարգերի արդյունավետությունը գնահատող կանոնակարգերը

ՄՈԻՀ-ը պետք է ունենա որակի ապահովման ընթացակարգերի արդյունավետությունը պարբերաբար գնահատելու մեխանիզմ: Այն պետք է ընդգրկի ՈԱԱԿ-ի կողմից պարբերաբար դիտարկվելու վերաբերյալ դրույթ:

9. Թափանցիկության և տեղեկատվական ծառայությունների ընթացակարգերը

ՄՈԻՀ-ը պետք է ունենա ներդրված մեխանիզմներ, որոնք ապահովում են կրթական տեղեկատվական ծառայությունների թափանցիկությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Accreditation in the European Higher Education Area, *In preparation for the Conference of European Ministers for Education in Bergen*, European Consortium for Accreditation, (2005)

ILAC-G3 Guidelines for Training Courses for Expert Used by Laboratory Accreditation Schemes

ISO/ 9001:2000: Understanding ISO 9001:2000 Requirements for Quality Management Systems. International Organization for Standardization, Geneva, Switzerland.

<http://www.askartsolutions.com/isoebooktoc.html>

ISO/IEC 17020 General criteria for the operation of various types of bodies performing Inspection

ISO/IEC 17011 General requirements for bodies providing assessment and accreditation of conformity assessment bodies

Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area, European Association for Quality Assurance in Higher Education (2005)